


1936

891.99  
7-34



891.99

Պ-34

64

12 MAR 2011

Հ. ՊԱՐՈՆՅԱՆ

պ

Տեխնիկական համալսարան

Վ. Մ. ԱՃԵՄՅԱՆԻ

ՄԵԾԱՊԱՏԻՎ

ՄՈՒՐԱՑԿԱՆՆԵՐ

ԿՈՄԵՏԻՍ 4 ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՄԲ 9 ՊԱՏԿԵՐՈՎ

Պատ. խմբ. Հ. ՄԵՐՏՅԱՆ







Վասակազար ռեժիսոր Վ. Մ. ԱՃԵՄՅԱՆ

ՅԵՐԿՈՒ ԽՈՒՔ

Պարոնյանք արեւմտահայ դրականութեան խոշորագոյն դեմքն է: Նքա խիզախ ծիծաղը, առաջագեւ ձգտումները, դեմոկրատիզմը և անկաշառ հայացքները հեռուողական կերպով յերևան են դալիս նրա բոլոր յերկերի մեջ: Պարոնյանն անգիջող ծաղրի յե յենթարկել ամիրայութեանը, կղերականութեանը, ազգային ջոջերին, և այդ ծաղրով նա այնքան հեռու յե դնացել, վոր փայլուն պայծառատեսութեամբ սկսել և խորանալ ու թափանցել իշխող հասարակական սխտեմի ջորժուական հասարակութեան խորքերը: Ահա թե վորոյիսզի հանգամանքներ ստիպեցին մեզ ձեռնարկել նրա յերկերից մի ամբողջական թատերական յերկ կազմելուն և այն ցուցադրելուն: Մեզ թվում է, Պարոնյանի ստեղծագործական բարձր տաղանդը և քաղաքական հայացքները լավագոյն կերպով արտահայտվում են նրա «Մեծապատիվ մուրացկաններում»: Այստեղ առավել ևս ընդգծվում է Պարոնյանի բողոքական տիրող միջավայրի և նացիոնալիստական դադափարախոսութեան հետ:

«Մեծապատիվ մուրացկանները» ժամանակի պոյսի հայկական հասարակական կյանքի մի շարք պատմական յերեվոյթների գեղարվեստական մեծ փաստաթուղթն է:

Մենք բավարար չհամարեցինք «Մեծապատիվ մուրացկաններին» վորպես պիեսի, նախկին վարիանտները վորովհետև նրանք ավելի սահմանափակ էին և ընդհանուր առմամբ չէին լուծում հասարակական կյանքի մի շարք հանգուցային խնդիրներ: Այսպիսով մեր առջև ծագեցավ «Մեծապատիվ մուրացկանները» նոր վարիանտի խնդիրը:

«Մեծապատիվ մուրացկանները» կողմնիս աշխատել ենք ընդգծել Պարոնյանի վերեւում հիշված խոշոր արժանիքները: Այս նկատառումով է, վոր մենք վերցրինք այնպիսի դործեր, վորոնք որդանապետ կարող էին իրար հետ շողկապվել: Միևնույն ժամանակ մենք չաշխատեցինք տեքստային ինքնուրույն ներմուծութեաններ անել, սկզբունքորեն այդ համարելով սխալ և աննպատակահարմար: Յեւակեա ունենալով Պարոնյանի ռեալիստական վոճը, մենք աշխատեցինք ծանրանալ յուրաքանչյուր տիպի ընավորութեան ամբողջացման վրա:

Ահա այստեղ է, վոր Պարոնյանը հեռուողական կերպով չի գարգացնում իր տիպը և չի տալիս պատմականորեն անհրաժեշտ լուծում: Մեր ձեռնկերպմամբ Արիստոյի աղան առեւարական ասիական կապիտալի տիպիկ արտահայտիչն է:

Արիստոյի կուլտը շահն է ու վոսկին, իր ուժը վոսկու ուժն է, քաջ գիտակցելով, վոր «ամեն ինչ ինձ համար է յեղեր»: Արիստոյի ապուղի ու հիմարի մեկը չէ, նա գիտե ամեն ինչ ծառայեցնել իր շահերին, և յեթե Պարոնյանի մոտ յերբեմն

ԽՄԲԱԳԻՐ—Ներեցեք, թողություն ըրեք, վոր չկրցի մինչև շո-  
քենալ գալ զձեզ զիմալորելու համար: Ինձի գրված էր

Տրապիզոնեն, վոր այս շարթուանպատճառ հոս պիտի գաք...  
ԱՒԻՍՈՂՈՄ—Յես ատանկ բաներու չեմ նայիր:

ԽՄԲԱԳԻՐ—Արդարև մալրաքաղաքս ինքզինքը բախտավոր  
համարելու յե ձեզի պես պատվական ազգային մը, շնոր-  
հալի յերիտասարդ մը, վողջամիտ մեկը...

ԱՒԻՍՈՂՈՄ—Մնտուկներս...

ԽՄԲԱԳԻՐ—Ազնիվ սիրա մը, վեհանձն հոգի մը...

ԱՒԻՍՈՂՈՄ—Բեռնա...

ԽՄԲԱԳԻՐ—Հայրենասեր անձ մը...

ԱՒԻՍՈՂՈՄ—Կիրները...

ԽՄԲԱԳԻՐ—Ազգասեր, ուսյալ, կրթյալ...

ԱՒԻՍՈՂՈՄ—Մնտուկ...

ԽՄԲԱԳԻՐ—Դաստիարակյալ...

ԱՒԻՍՈՂՈՄ—Ներս ապին, տարին...

ԽՄԲԱԳԻՐ—Ազնվասիրտ, ազնվախոհ, ազնվազեմ մեկը իր մեջ  
ունենալուն համար:

ԱՒԻՍՈՂՈՄ—Մնտուկներուս մեջ ատանկ բաներ չկան:

ԽՄԲԱԳԻՐ—Կաղաչեմ, ըսեք ինձի, քանի՞ տարեկան էք:

ԱՒԻՍՈՂՈՄ—Քսոսսուն:

ԽՄԲԱԳԻՐ—Վաճառական եք կարծեմ:

ԱՒԻՍՈՂՈՄ—Այո... Յեթե անցագիր պիտի շինել տաք հարկ  
չկա, վասնզի հատ մը ունիմ:

ԽՄԲԱԳԻՐ—Ձե, վողվան թերթիս մեջ պիտի գրեմ, վոր առա-  
ջի ուր Տրապիզոնեն մալրաքաղաքս յեկավ մեծապատիվ  
Արիսողոմ ազան, յերեմելի վաճառական, վոր յուր լեզվա-  
գիտությամբ և վաճառականական հմտությամբ ծանոթ է  
մեր ազգայիններուն, ասձկերեն գիտեք կարծեմ:

ԱՒԻՍՈՂՈՄ—Վոչ:

ԽՄԲԱԳԻՐ—Ձրանսերեն:

ԱՒԻՍՈՂՈՄ—Վոչ:

ԽՄԲԱԳԻՐ—Մնգրերեն:


ԱՒԻՍՈՂՈՄ—Վոչ:

ԽՄԲԱԳԻՐ—Գերմաներեն:

ԱՒԻՍՈՂՈՄ—Վոչ:

ԽՄԲԱԳԻՐ—Վնաս չունի, յես լեզվագետ պիտի ըսեմ ձեզի հա-  
մար և ձեր վրայոք դովեստով պիտի խոսիմ:

ԱՒԻՍՈՂՈՄ—Ամեն Պոլիս յեկողներուն անունները ձեք թեր-  
թին մեջ կը գրեք:



1 պատկեր  
Խմբագիր յեյ Արիսողոմ

ԽՄԲԱԳԻՐ—Գրեթե ամենն ալ, յեթե ձեզի պես ազգայիններ  
ըլլան:

ԱՒԻՍՈՂՈՄ—Շատ լավ, իմ անունս ալ գրեցեք, յես ալ պատ-  
վաւոր ազգային եմ, մեր քաղաքին մեջ արտերու, յեզ-  
ներու, կովերու և ազարակներու տեր եմ... ասոնք ալ գրե:

ԽՄԲԱԳԻՐ—Հոգ մի ընեք, խղճի և սրղարության պարտք մը  
կատարելու համար անոնք ալ կը գրեմ:

ԱՒԻՍՈՂՈՄ—Միայն հարուստ մարդերուն գալն ու յերթալն կը  
գրեք... Այնպես չէ:

ԽՄԲԱԳԻՐ—Այո:

ԱՒԻՍՈՂՈՄ—Յեթե ազաքատներուն ալ կը գրեք, չեմ ուզեր  
վոր իմ անունս...

ԽՄԲԱԳԻՐ—Բնավ յերբեք, ձեր հասցեն տվեք, վոր տեղական  
թղթատարով զրկեմ լրագիրը:

ԱՒԻՍՈՂՈՄ—Բերա, Ծաղկի փողոց, թիվ յերկու:

ԽՄԲԱԳԻՐ—Շատ աղեկ:

ԱՒԻՍՈՂՈՄ—Վաղը առտու լույսը չձեղքված զրկե, վոր կարգամ  
իմ անունս լրագրին մեջ:

ԽՄԲԱԳԻՐ—Այդ մասին հանգիստ յեղեք, վաղը առտու անպատ-  
ճառ կը դրկեմ, ասկէց յետքը դուք բաժանորդ պիտի ըլլաք  
իմ լրագրույս, մեկ տարով վճարելով մեկ ու կես վոսկի:

ԱՅԻՍՈՂՈՄ—Մեկ ու կես վոսկի... շատ է, յերեք քառորդ,  
չբաժնիր:

ԽՄԲԱԳԻՐ—Խմբագիրները բաժանորդագնույն վրա սակար-  
կութուն չեն ընէր...

ԱՅԻՍՈՂՈՄ—Շատ աղեկ, միայն թե անունս խոշոր տառերով  
գրված ըլլա...

ԽՄԲԱԳԻՐ—Հանգիստ յեղեք: Ստեղծանք Արիստոտել ազա, բնավ  
ձեր մտքն չանցունեք, վոր այս մարդը այն մուրացկան  
խմբագիրներն է, վոր մեկ ու կես վոսկի փրցնելու համար  
զիս տեսնելու յեկավ: Քավ լիցի, յես իբրեւ պատվովոր  
մարդ կուգեմ ապրիլ: Կաղաչեմ, ձեր կողորդը սպմեցի, վոր  
բաժանորդ գրվիք:

ԱՅԻՍՈՂՈՄ—Ամենեվին:

ԽՄԲԱԳԻՐ—Ատրճանակ ցցուցի:

ԱՅԻՍՈՂՈՄ—Քավ լիցի:

ԽՄԲԱԳԻՐ—Դանակ քաշեցի:

ԱՅԻՍՈՂՈՄ—Բնավ յերեք, բայց ուրիշ տեղեր տարճանակ կամ  
դանակ ցցունելով բաժանորդ կը գրեն:

ԽՄԲԱԳԻՐ—Ե՛հ, ուստի յես վեհանճնարար վարվեցա այս պարա-  
գայիս մեջ:

ԱՅԻՍՈՂՈՄ—Տարակույս չկա:

ԽՄԲԱԳԻՐ—Ե՛հ, շնորհակալ եմ ձեզմե, մնաք բարով, Արիստոտել ա-  
զա:

ԱՅԻՍՈՂՈՄ—Վազմանին մեջ խոշոր գիրերով անցունելը չը մոռ-  
նաք:

ԽՄԲԱԳԻՐ—Հանգիստ յեղեք, ամենախոշոր գիրերով: (Կերթա):

ԱՅԻՍՈՂՈՄ—Յես ինք զինքս չեյի կարծեր այնչափ մեծ մարդ,  
վորչափ վոր կը կարծես այս խմբագիրն, բայց հարկով ա՛ն  
ինձմե աղեկ գիտես իմ վորչափ մեծ ըլլալս, վասնզի խմբ-  
ագիր մ'է և ուսումնական է... (բեռնակիրներուն հիշելով)  
սնտուկներս... անկողինս... առին, տարին... (զուրս կը  
վազէ):

Վ Ա Ր Ա Գ Ո Ւ Յ Ր

## Պ Ա Տ Կ Ե Ր Յ Ե Ր Կ Ր Ո Ր Գ

Բ Ե Ր Մ, Ծ Ա Ղ Կ Ի Փ Ո Ղ Ո Յ

Ներկի փողոց մը, տուննու պատահաններու ծաղիկներով ծաղկա-  
աններ, ծաղկամաններու նետվեց կը լսվի աղջկան մը յերգը: Կանց-  
նին Արիստոտել աղայի բեռնակիրներ:

ՍԱՆԴՈՒԽՏ—(պատահանն) Քա, Քաթիկ հանըմ, իմացածք Պա-  
պիկ աղային ըրածը:

ՔԱԹԻԿ—(Փողոցի դռանը նստած) Իմացածիս պես սափրթմիչ յե-  
ղա, քա, փողոցի մեջ ուտելով քալելն ինչ պատիժ է:

ՍԱՆԴՈՒԽՏ—Վաճառականի մը կը վայելէ ըրածը:

ՔԱԹԻԿ—Մեղք, մեղք, յուր վարկը կոտորեց, բիացայի վրա քսան  
հազարի վարկ ուներ:

ՍԱՆԴՈՒԽՏ—Քիչ մը համբերեք թող, յերթար տունը շնքով  
շնորհքով նստիր, հաց ուտեր, փաթլամիչ չպիտի ըլլար յա:

ՔԱԹԻԿ—Տիկին Սանդուխտ, ան որիորդ Աղայինն չէ, վոր մեզի  
կուգա:

ՍԱՆԴՈՒԽՏ—Անիկա յի, բարով խերով չգար, յերեկ ալ տեսա  
յեկեղեցիին մեջ, աղ վորչափ ձերմակ քաված եր... գլուխն  
ալյուրի պարկին մեջն եր խոթեր, ինչ եր ըրեր: Այսու  
ամենայնիվ սատանան շատ գեղեցիկ է:

ՔԱԹԻԿ—Դեղեցկութունն ալ ուր է ատոր... յերեսը բնավ տես-  
նալ չեմ ուզեր. կողը տեսնես: Անանկ ալ շրջադղես  
մը հագած է, վոր չորս կողմը բաց է:

ՍԱՆԴՈՒԽՏ—Թերես քուժալը պակաս ըլլա: (Տիտալ) հա, հա,  
հա: Սուս, կը մոտենա կոր:

ՔԱԹԻԿ—Բարի յեկաք, որիորդ Աղայինի, աս ուր էք, հիմա  
տիկին Սանդուխտին քեզի համար կը խոսեյի, թե որիորդ  
Աղայինն մեզի բոլորովին մոռցավ:

ԱՂԱՎՆԻ—Յես ձեզի կը մոռնամ. ամեն որ ալ յեկեղեցիին ու-  
զիլ ձեզի կուգամ:

ՔԱԹԻԿ—Որիորդ Աղայինի, իրավ, ձեզի տեսնամ'նե՛ք քույրս տե-  
սածի պես կըլլամ: Ամեն որ ալ տեսնամ նե քեզի՛ չեմ կըլ-  
տանար:

ՍԱՆԴՈՒԽՏ—Յես ալ անանկ եմ:

ԱՂԱՎՆԻ—Շնորհակալ եմ (մեկուսի) կողը տանի յերկուքնիկ ալ:

ՔԱԹԻԿ Աղ շրջադղեստիլ ձեզն ուսկից առիր, Աղայինի:

ԱՂԱՎՆԻ—Հավնեցածք:

ՔԱԹԻԿ—Շատ հավնեցա. հատ մ'ալ յես պիտի շինեմ ատանկ:

ՍԱՆԴՈՒԽՏ—Քեզի բան մը պիտի հարցնեմ, բայց շիտակը պիտի զրուցես, վասնզի շարաթ մը կա, վոր տուներնուս մեջ կուզը պոկաս չէ: Տիկին Թերեղային առջևին աղոաները շինծու չէն մի:

ԱՂԱՎՆԻ—Յետեվիններն ալ շինծու չեն:

ՍԱՆԴՈՒԽՏ—Վող ըլլաս, յես կըսեմ նե՛ ինձի չեն հավատար, բան մ'ալ պիտի հարցնեմ, բայց կը քաշվիմ՝ կոր...

ԱՂԱՎՆԻ—Մի քաշվիք:

ՍԱՆԴՈՒԽՏ—Տիկին Շողակաթին դիրուծյունը բնական է, թե բամբակ թխմած է:

ԱՂԱՎՆԻ—Տիկին Անթառամին ըսածին նայիս նե՛ բամբակ է, իսկ տիկին Շուշանին խոսքին հավատանք նե՛ բուրդ կը թխմե յեղեր:

ՍԱՆԴՈՒԽՏ—Շնորհակալ եմ, որիորդ Աղավնի, մեզի մեծ հոգե մը ազատեցիր, չգիտես քանի մ'որեն ի վեր վորչափ անհանգիստ է յի, վեր հրամանեցեք, որիորդ Աղավնի, անուշ մ'առեք, կազաչեմ:

ԱՂԱՎՆԻ—Շնորհակալ եմ, ժամանակ չունիմ, յեկա ձեզի լուր մը հազորդելու, վժր նոր, յեկեղեցիին մեջ իմացա, բայց կազաչեմ, մեկու մը բան չըսեք, Փանոս աղային կինը Չարուհին երիկը կը սիրե, մնաք բարով, վաղն ալ կանցնիմ: (Կերթա):

ՍԱՆԴՈՒԽՏ—(Շանթահարվածի պես կը կրկնե) Փանոս աղային կինը Չարուհին երիկը կը սիրե յեղեր... երիկը կը սիրե, երիկը... Բաթիկ հանրմ, Բաթիկ հանրմ, դուքս յելիք վոտքդ պագնեմ: Փանոս աղային կինը Չարուհին երիկը կը սիրե: Բայց կը խնդրեմ, այս խոսքը գազտնի մնաքովդ...

ԲԱԹԻԿ—Ատանկ խոսք մը ուրիշին կըսվի... (Իրացիին դուռը կը գարնե) Մարինե հանրմ, Մարինե հանրմ...

ՄԱՐԻՆԵ—Վեր հրամանեցեք, Բաթիկ հանրմ...

ԲԱԹԻԿ—Չեմ կրնար, Մարինե հանրմ... խոսք մը ընեմ և յերթամ պիտի, վասնզի գործ ունիմ տունը:

ՄԱՐԻՆԵ—Խեբ է:

ԲԱԹԻԿ—Ինչպես խեբ... Փանոս աղային կինը Չարուհին երիկը կը սիրե յեղեր, հիմա իմացա և շատ ուրախացա,



Մշակները աղից՝ ձախ—Ո. ՂԱԶԱԶՅԱՆ, Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ Ժ. ԵՂՈՅԱՆ

բայց վոտքդ պագնեմ, ուրիշի մի ըսեր, գազտնի պանե, մնաք բարով:

ՄԱՐԻՆԵ—Ատանկ բանը ուրիշին կըսվի... անհոգ յեղիր:

Բարիկը կըմեկնի: Մարինե հանրմ ձախ կողմի դուռը կը գարնե, կեբվա Ելպիս հանրմ:

Ելպիս հանրմ, Ելպիս հանրմ...

ԵՂՈՅԱՆ—Վեր հրամանեցեք, տիկին Մարինե, վժր հողը փչեց տատակ:

ՄԱՐԻՆԵ—Մանկ... Ինչպես էք, աղեկ էք, ինչպես է ձեր աճուսինը... Փանոս աղային կինը Չարուհին երիկը կը սիրե, հիմա իմացա և շատ ցավեցա: Վոտքդ պագնեմ, չըլլա վոր ուրիշին զրուցեք, վասնզի ինձի ըսողն պատվիրեց, վոր մեկու մը չըսեմ:

ԵՂՈՅԱՆ—Անհոգ յեղիր, Մարինե հանրմ, ատանկ լուրը ուրիշին կըսվի:

Մարինե կըմեկնի, Ելպիսը կը վագն ուրիշներու ավետելու:

Սըբուհի տուտու... Սըբուհի տուտու, Փանոս աղային կինը Չարուհին երիկը կը սիրե...

Պ Ա Տ Կ Ե Ր Յ Ե Ր Ր Ո Ր Գ

Մանուկ աղալի տունը

Յեկնաբանի բնական մը, վերջ փոքիկ սենյակ մը, վառի սենյակը սեղանատուն է: Տիկին Շողակաբբ լուսամուտին մոտ:

ՇՈՂԱԿԱՍԹ.— Հա, հա հա, Փանոս աղային կինը Չարուհիին կրիկը կը կըսիրի յեղեր, վնչ Փանոս աղա, վնչ... Հա, հա, հա, Փանոս աղային կինը Չարուհիին կրիկը կըսիրի... (կրակսի տախտակները ռփել): Ա՛լ դիմանալու բան չէ, առտըլն մինչև իրիկուն տախտակները շփե, հողիս մարեցավ, անխ, յես ի՞նչ ըսեմ իմինիս, վոր թողականութեան յետեվեն է ինկեր և բնավ չըմտմտար, վոր ուտելու համար հաց պետք է, միս պետք է, յուղ պետք է, բրինձ պետք է, զանոնք յեփելու համար փայտ պետք է, ածուխ պետք է, ասոնք բնավ չը հարցուներ, առտուն լույսը ճեղքած կերթա և իրիկվան մութուն կուգա: Առտըլն մինչև իրիկուն սրճարանները կերթա կը նստի աղգային գործերու վրա կը խոսի, զիս ասանկ խեղճ կը թողու: (Դուռը կը բացվի յեվ բեռնակիրները ներս կը մտնեն) Արիսողոմ աղային ըլլալու յեն ասոնք, այնպես չէ:

- 1-ին ԲԵՌՆԱԿ.— Անունը չըսավ մեզի:
- ՇՈՂԱԿԱՍԹ.— Ի՞նչ տեսակ մարդ էր:
- 2-րդ ԲԵՌՆԱԿ.— Խոշոր թիկնոց մը հագած էր:
- ՇՈՂԱԿԱՍԹ.— Ի՞նչ գույնով էր, ճերմակ, թե թուխ:
- 2-րդ ԲԵՌՆԱԿ.— Վոչ, սև էր...
- 3-րդ ԲԵՌՆԱԿ.— Այո, սեվ, բայց աղվոր, անոր փաթավորը ձմեռը չը մըսիր:
- ՇՈՂԱԿԱՍԹ.— Այդ ի՞նչ խոսք է, փաթավորն ինչ պիտի ըլլա... յես քուկին գիտցած կնիկներեն չեմ, հասկցամ:
- 3-րդ ԲԵՌՆԱԿ.— Վնասակար բանմը չըսի, փաթավորով ի՞նչ կըրնա ըլլալ:
- ՇՈՂԱԿԱՍԹ.— Ատկե ավելի վնասակար ի՞նչ կըրնա ըլլալ:
- 3-րդ ԲԵՌՆԱԿ.— Շատ բարակ բաներու մեր խելքը չըպակիր:
- ՇՈՂԱԿԱՍԹ.— Յես կը պատկեցունեմ... դուն զիս կըճանչնաս:
- 1-ին ԲԵՌՆԱԿ.— Փաթավորեն ի՞նչ վնաս կուգա:

- ՇՈՂԱԿԱՍԹ.— Յես երիկ ունիմ, ինչու պիտի փաթավոր անոր:
- 3-րդ ԲԵՌՆԱԿ.— Երիկ անեցողներն ալ կը փաթավորն, երիկն ուրիշ, աս ուրիշ, աս կը տաքցունե: Ըսենք վոր ձմեռը գիշեր մը դուրս յելար, փողոցին մեջ երկանդ չես կըրնար փաթավոր, բայց աս կունակը կառնես:
- ՇՈՂԱԿԱՍԹ.— Արիսողոմ աղան:
- 1-ին ԲԵՌՆԱԿ.— Թիկնոցը, տիկին, Արիսողոմ աղան կունակի վրա կառնվի:
- ՇՈՂԱԿԱՍԹ.— Մինչև հիմա թիկնոցի վրա կը խոսեցիր:
- 3-րդ ԲԵՌՆԱԿ.— Խոսքերնիս թիկնոցի վրա չեմ մի... հապա դուն ի՞նչ հասկցար:
- ՇՈՂԱԿԱՍԹ.— Յես հասկցա, վոր Արիսողոմ աղային փաթավորու յե կըսես:
- 3-րդ ԲԵՌՆԱԿ.— Տեր վողորմյա, տեր վողորմյա:
- ՇՈՂԱԿԱՍԹ.— Ինչ ըսեմ իմինիս, վոր գործի չերթար և խելքը միտքը թաղական ըլլալուն ետեվ, յեթե խելքը գլուխը մեկն ըլլար յես հիմա թագուհիի մը պես կյանք կանցունեցի, զավակ չունիմ, բան չունիմ, բայց ինչ ըսեմ, վոր խելքը միտքը թաղական ընտրվելու և թաղական վար առնելու վրա յե:
- 1-ին ԲԵՌՆԱԿ.— Տիկին, մեր իրավունքը տուր, վոր յերթանք:
- ՇՈՂԱԿԱՍԹ.— Աստուծան գտնան այն թաղականներն ալ, վոր բուրբիս խեղճութեանը պատճառ կըլլան կոր:
- 2-րդ ԲԵՌՆԱԿ.— Տիկին, պարտապ տեղը մի սպասցուներ մեզ:
- ՇՈՂԱԿԱՍԹ.— Ինչուդ պետք քուկին, ուզողը նստի չուզող չը նստի, գնն մնացիր այս աղգին գործերը շտկող:
- 3-րդ ԲԵՌՆԱԿ.— Տիկին, մեր իրավունքը տուր, վոր յերթանք, ինչու կսպասցունես:
- ՇՈՂԱԿԱՍԹ.— Վաղը յեկեք: (Բեռնակիրները դուրս կեցնեն) Ահա, հյուրերնիս այսոր յեկած, և հարկավ անոթի յե մարդը, առջեվը բան մը հանելու յե վոր ուտե և մենք բան մը չունինք, վասնզի իրիկունները տուն յեկած ժամանակը կտոր մը միս կամ ձուկ չըբերեր, վոր տունին մեջ կերակուր գտնվի... թաղականն զատ ուրիշ բան չունինք տուններունու մեջ, ամեն իրիկուն թաղական, թաղական...

112.

Գուրդ կը բացվի յեվ ներս կը մտնեն Մանուկ աղան

Սեծագրատիվ մուրացկանիկ — 2

5163-50

APM. C.C.P. 1926

17

ՄԱՆՈՒԿ—Չե՞ս ըսեր, կնիկ, թաղական ընտրվելուս գործն ալ այսոր գրեթե ըմբոսցինք, կիրակի որը քվեարկությունը պիտի կատարվի և բոլոր անդամները ինձի պես պատվափոր մարգիկ պիտի ըլլան: Մարկոս աղային քանի մը ողի խմցունելով չեռեցին ինկա, վոր յուր քվեն ինձի տա և վոչ թե թորոս աղային, վասնզի յես ուրիշներուն պես թագին սնտուկներն գրամ չպիտի գողնամ և դպրոցն ալ...

ՇՈՂԱԿԱՍԹ—Աղ խոսքերուն առենը չե հիմա, շուտ, գնա կըտոր մը միս առ:

ՄԱՆՈՒԿ—Թորոս աղան խմացավ և շատ սրբոզեցավ և ասկից վերջը հետս սքամպիլ չըպիտի խաղա, թո՞ղ չը խաղա...

ՇՈՂԱԿԱՍԹ—Յես քեզի ինչ կըսեմ կոր... շուտ ըրե, գնա:

ՄԱՆՈՒԿ—Յես ալ Մարտիրոս աղային հետ տամա կը խաղամ ասկից յետքը:

ՇՈՂԱԿԱՍԹ—Աղ խոսքերն վերջն ալ կընենք, Մանուկ աղա, գնա մտավաճառեն քիչ մը միս առ ու բեր:

ՄԱՆՈՒԿ—Տիրացու Մարտիրոսին գլխուն յեկածը չես ըսեր, կնիկ, խեղճին կինն այս գիշեր մազ մնաց, վոր մեռնի յեզեր...

ՇՈՂԱԿԱՍԹ—Ինչո՞ւ:

ՄԱՆՈՒԿ—Մանչ մ'ե բերեր, բայց շատ դժվարությամբ, չորս դայակ և տասնչորս բժիշկ հազիվ կըրցած են աղան առնել:

ՇՈՂԱԿԱՍԹ—Խեղճ կնիկ:

ՄԱՆՈՒԿ—Վաղը քիչ մը գնա զինքը տես:

ՇՈՂԱԿԱՍԹ—Կերթամ, հիմա դուն գնա սա մսին գործը լըմնցուր:

ՄԱՆՈՒԿ—Այս գիշեր անպատճառ միս պե՞տք ե:

ՇՈՂԱԿԱՍԹ—Հապա՞մ, Արխողոմ աղային անկողինն ու խնտուկները բերին, ինքն ալ հիմա կուգա:

ՄԱՆՈՒԿ—Իրո՞վ կըսես, կնիկ:

ՇՈՂԱԿԱՍԹ—Սուտ ինչո՞ւ պիտի խոսիմ:

ՄԱՆՈՒԿ—Շատ աղեկ, ուրեմն յերթամ պատվական միսչմը առնեմ ու գամ: (Կերբա):

ՇՈՂԱԿԱՍԹ—(Յեսեվեն պտալով) Մանուկ աղա... Մանուկ աղա... (Մանուկ աղան հետ կը դառնա) միսն ինչո՞վ պիտի չեփենք:

ՄԱՆՈՒԿ—Կուգե՞ս գեանախնձորով յեփե, կուգես լուրջայով:

ՇՈՂԱԿԱՍԹ—Աղ չե ըսածս, ածուխ չունինք, քիչ մ'ալ ածուխ առնելիք:



Խմբագիր  
Գ. ՀԱԿՈԲՅԱՆ

Խմբագիրները բաժանորդագնույն վրա սակարկություն չեն ընեն...

ՄԱՆՈՒԿ—Շատ աղեկ: (Կսկսի յերբալ):

ՇՈՂԱԿԱՍԹ—Մանուկ աղա, Մանուկ աղա... աղեկ, մինակ մտով չըլլար, քիչ մ'ալ բրինձ առ, վոր ապուր շինենք:

ՄԱՆՈՒԿ—Աղեկ ըսիր, կնիկ, քիչ մ'ալ բրինձ առնենք:

ՇՈՂԱԿԱԹ—Մանուկ աղա, Մանուկ աղա... (Կուսմունքն փողոցը պոռալով):

ՄԱՆՈՒԿ—Ի՞նչ կուզես:

ՇՈՂԱԿԱԹ—Մարդ աստուծո, շողեկառքի պես կը վազես, ձայն մարեցավ, սոխ չունինք, աղ ալ չունինք, քիչ մ'ալ գաղ կամ ճրագ առնելու յե, վոր վառենք, մարդը մութիւն պիտի նստեցունենք:

ՄԱՆՈՒԿ—Աղեկ ա, ամենը մեկեն ըսե, վոր նպարավաճառին յերթամ ե պետք յեղածն առնեմ, հարկուր անգամ յետեվես կանչեցիր:

ՇՈՂԱԿԱԹ—Ձուրի շիշ ալ չունինք... գլուխս կապելու բան մը չունիմ, վտոքս հագնելու կոշիկ չունիմ, այս վիճակով ինչպես Արիստոզոմ աղային դեմ յեխեմ:

ՄԱՆՈՒԿ—Հիմա ուտելիքը առնենք, թագական ընտրվելես ետքըն ալ հագնելիքը կը մտմտանք:

ՇՈՂԱԿԱԹ—Մանուկ աղա, Մանուկ աղա...

ՄԱՆՈՒԿ—Ուղածիդ չափ պոռա, ալ յես չեմ դառնար:

ՇՈՂԱԿԱԹ—Գեսնին տակն անցնիս թաղականովդ մեկտեղ, մարդ: Սա գիմացեն յեկողն ճվ ե, բնավ տեսած չունիմ, ինչ աղվոր բեխեր ունի... Ասոր աղվորութիւնն ալ ճւր ե, սատանա կընմանի: Վտաքդ պագնեմ, աս ինչ մեծ վտաքեր ունի, ինչ մեծ ականջներ ունի, ինչ մեծ—մեծ քթեր ունի, աչքերն ալ պատուհաններուն վրա յե, այս փողոցին մեջ մեկը կը փնտրե արդէ՞ք...

ԱՅԻՍՈՂՈՄ—Յերկու թիվը վճրն ե:

ՇՈՂԱԿԱԹ—Աս ե, հրամմեցեք Արիստոզոմ աղա... վեր յեկեք...

ԱՅԻՍՈՂՈՄ—Անկողինս ու սնտուկներս բերին:

ՇՈՂԱԿԱԹ—Բերին, արիստոզոմ աղա, վեր հրամմեցեք Արիստոզոմ աղա...

(Կիսավորելով Արիստոզոմ աղային) Հրամմեցեք, մտեք, վայ Արիստոզոմ աղա վայ, բնավ մտքես չեր անցնիր, վոր այս գիշեր մեզի պիտի գուցիք, վճր հով փչեց սանկ, վայ Արիստոզոմ աղա վայ, ե ինտոր եք նայինք, ինչ կընեք կոր, շիտակը հավատալիքս չի դար կոր, վոր դուք արդեն հոս եք, վայ Արիստոզոմ աղա, վայ, այս գիշեր մեզի պիտի իջնաս յեղեր, հա, բարի յեկար հազար բարի, մեր դուրը բաց ե, ե, դահա ինտոր եք նայինք, վճր մեկը հարցնեմ չիջ-

տեմ, քեզի տեսա նե, կարծես քի գանձ մը գտա, շատ բան, շատ բան: Այս գիշեր պիտի գաս յեղեր հա, վայ Արիստոզոմ աղա, վայ, ե, դահա ինտոր եք նայինք:

ԱՅԻՍՈՂՈՄ—Փառք աստուծո, տիկին, դուք ինտոր եք:

ՇՈՂԱԿԱԹ—Ձեզի տեսանք ալիքի աղեկ յեղանք, վայ Արիստոզոմ աղա, վայ, յեթե կուզես քիչ մը հոգնութիւն առնելու համար (Վեր գույց սալով) սա պատիկ սենյակը նստեցեք:

ԱՅԻՍՈՂՈՄ—Շատ հոգնած եմ, քիչ մը հոս կընստիմ:

ՇՈՂԱԿԱԹ—Ձեր կամքն ինչպես վոր կուզես, այնպես ըրեք, Արիստոզոմ աղա, տունը ձերն ե, Արիստոզոմ աղա, ձեր տունին պես հանգիստ ըրեք:

ԱՅԻՍՈՂՈՄ—Շնորհակալ եմ:

ՇՈՂԱԿԱԹ—Ողի մը բերեմ կը խմեք, Արիստոզոմ աղա:

ԱՅԻՍՈՂՈՄ—Ողի չեմ խմեր:

ՇՈՂԱԿԱԹ—Ինչ՞ու չեք խմեր կոր, Արիստոզոմ աղա, մի խմեր, յես դոր չեմ ըներ, ինտոր կուզես նե՞ անանկ ըրե, քեֆդ նայե, սանկ հանգիստ նստե, կաղաչեմ, կունակդ բարձին տուր... կուզես նե հենվե, ենթարի մը բերեմ, բարուջ բերեմ... ստանկ հա, վայ Արիստոզոմ աղա, վայ: Ե, ինչպես եք, տունը ինչպես են, աղեկ են:

ԱՅԻՍՈՂՈՄ—Աղեկ են:

ՇՈՂԱԿԱԹ—Թող աղեկ ըլլան, ձեր գավակներն ինչպես են, զըպըոց կերթան:

ԱՅԻՍՈՂՈՄ—Ձավակ չունիմ:

ՇՈՂԱԿԱԹ—Ձեր տիկինն ինչ կընե, աղեկ ե, Արիստոզոմ աղա...

ԱՅԻՍՈՂՈՄ—Տիկին չունիմ դեռ:

ՇՈՂԱԿԱԹ—Կարգված չե՞ք, Արիստոզոմ աղա:

ԱՅԻՍՈՂՈՄ—Չե:

ՇՈՂԱԿԱԹ—Շատ լավ, հոս աղավորիկ աղջիկ մը գտնենք ու Պոլսեցի ընենք քեզի:

ԱՅԻՍՈՂՈՄ—Անանկ միտք մը ունինք, բայց աղջիկեն առաջ յես կերակուր կուզեմ, վասնզի առաւրձնե ի վեր բերանս բան դրած չեմ:

ՇՈՂԱԿԱԹ—Շատ աղեկ, Արիստոզոմ աղա հիմա կը բերեմ:

Արիստոզոմ աղան միակ մնալով վերցուց գիրք մը:

ԱՅԻՍՈՂՈՄ—«Ձեն հոգեվոր» ինչիս պետք «չեն հոգեվորք, յերբ փորս գեն մարմնավորի կարիք ունի»: (Գիրքը ձգելով քալել կսկսի):

**ՇՈՂԱԿԱՍԹ**—(Ներս մտնելով) Վայ, Աբխոզում աղա վայ, նոր պիտի կարգվի չեղեր, չըսէս, Պոլսեցի պիտի առնես յեղեր, չըսէս, բայց կաղաչեմ, Աբխոզում աղա, վոր ձեր տունին պես հանգիստ ընեք, սեպե թե յես ալ քույրդ եմ կամ աղջիկդ եմ, յեթե բան մը կուզես, մի քաշվիր, բսե ինձի, վոր բերեմ:

**ԱՅԻՍՈՂՈՄ**—Հիմա հերակուրեն զատ ուրիշ բան մը չեմ ուզեր:

**ՇՈՂԱԿԱՍԹ**—Կերակուրը պատրաստվելու վրա յե, հոգ մի ընեք: Հիմա պիտի բերեմ:

**ԱՅԻՍՈՂՈՄ**—(Մեռնակ) Ինչ տեսակ կնիկ ե այս, զիս անոթի կը պահես և կը պատվիրես, վոր հանգիստ ըլլամ, անոթի մարդը հանգիստ կըլլամ, վայ, Աբխոզում աղա, վայ: Այս գիշեր անոթի պիտի պահեն զիս... աս ինչ խայտառակութուն ե... ալ քաշվելու բան չե, յես իմ քաղաքիս մեջ սպասավորներ ունեյի, վոր զեմս բարե կը բռնեյին, սեղանը կանուխ կը պատրաստեյին և իմ գործս կը տեսնեյին, սպասավորներով վարժված մարդ մը ինչո՞ւ այս նեղութունը քաշե... չե, կամ ուրիշ տեղ մը չերթալու յե և կամ կինը կանչելով քանի մը խոսք բսելու չե:

Ներս կուգա Շոլակարք:

**ՇՈՂԱԿԱՍԹ**—Կերակուրը պատրաստվելու վրա յե, հոգ մի ընեք, Աբխոզում աղա, հիմա պիտի բերեմ:

**ՄԱՆՈՒԿ**—(Մտնելով) Բարե յեկաք, Աբխոզում աղա, կը ներեք, վոր թողին գործերը թուշլ չը տվին զալ զձեզ զիմափորելու, սանկ հրամայեցեք, Աբխոզում աղա, ներեցեք, կերակուրն այսչափ ուշացնելուս համար, ուրիշ իրիկուներ ձեր ուզած ժամուն կընաք ուտել, այս գիշեր քանի մը պատճառներ թող չտվին, վոր սեղանը ժամանակին պատրաստվեր, այս պատճառները վերջը կը պատմեմ քեզի: Ի՞նչպես եք նաչինք, Աբխոզում աղա հանգիստ եք:

**ԱՅԻՍՈՂՈՄ**—Շատ հանգիստ եմ:

**ՄԱՆՈՒԿ**—Շնորհակալ եմք, մեր բարեկամն ինչպես և Տրապիզոն:

**ԱՅԻՍՈՂՈՄ**—Աղեկ ե, հատկապես բարե ըրավ ձեզի:

**ՄԱՆՈՒԿ**—Բերող տանողը վողջ ըլլա, չեթե ձեզի զավաթ մը սղի տամ կը տնկեք:

**ԱՅԻՍՈՂՈՄ**—Գալաթ մը միայն կը խմեմ:



II պատկեր

Քարիկ հանրմ. Մարիմե հանրմ, Ելպիս հանրմ:

**ՄԱՆՈՒԿ**—Մեր զավաթները պզտիկ են, մանավանդ թե Պոլսո ողն ալ կվերցունես, հրամայեցեք:

**ԱՅԻՍՈՂՈՄ**—Շնորհակալ եմ:

**ՄԱՆՈՒԿ**—Ձեր կենդանությանը, Աբխոզում աղա, բարե յեկաք:

**ԱՅԻՍՈՂՈՄ**—Վողջ յեղեք:

**ՄԱՆՈՒԿ**—Աստված շատ տարիներու հասցնե խնդությամբ:

**ԱՅԻՍՈՂՈՄ**—Ձեզի ալ:

**ՄԱՆՈՒԿ**—Աստված քիտեր չը ցցունես:

**ԱՅԻՍՈՂՈՄ**—Ամեն:

ՄԱՆՈՒԿ—Աստված քյար, պերեքեթ սա:

ԱՔԻՍՈՂՈՄ—Ամեն:

ՄԱՆՈՒԿ—Ազգոր կնիկ մը առնեք:

ԱՔԻՍՈՂՈՄ—Շնորհակալ եմ:

ՄԱՆՈՒԿ—Թագեթ պսակներ պագներ:

ԱՔԻՍՈՂՈՄ—Շնորհակալ եմ:

ՄԱՆՈՒԿ—Հարսներ առնեք, փեսաներ առնեք:

ԱՔԻՍՈՂՈՄ—Շնորհակալ եմ:

ՄԱՆՈՒԿ—Թոռներ ունենաք:

ԱՔԻՍՈՂՈՄ—Աստուծով:

ՄԱՆՈՒԿ—Թոռներու թոռներ ունենաք:

ԱՔԻՍՈՂՈՄ—Աստված լսե:

ՄԱՆՈՒԿ—Թոռներու թոռներուն թոռներն ալ տեսնաք:

ԱՔԻՍՈՂՈՄ—Շնորհակալ եմ:

ՄԱՆՈՒԿ—Հիվանդություն, ցավ չը տեսնաք:

ԱՔԻՍՈՂՈՄ—Ամեն:

ՄԱՆՈՒԿ—Խոր ծերության հասնիք:

ԱՔԻՍՈՂՈՄ—Գուր ալ:

ՄԱՆՈՒԿ—Հող բոնեո, վտակի դառնա:

ԱՔԻՍՈՂՈՄ—Անուշ ըլլա, Մանուկ ազա: (կը խմեն):

ՄԱՆՈՒԿ—Տիկինը մինչև վոր կերակուրը տաքցունե և բերե մենք կընանք խոսիլ և ժամանակ անցունել, ախպես չե՞, Արիսողոմ ազա:

ԱՔԻՍՈՂՈՄ—Այո...

ՄԱՆՈՒԿ—Մտիկ ըրեք ուրեմն այսոր մեր գլխուն յեկածները: Քանի մը շարաթե ի վեր թաղական ընտրվելու յետեվե ինկած եմ, դուք հիմա ձեր մտքեն պիտի ըսեք, թե մարդ, թաղականությունը քուկին ինչու պետք: Անանկ չե, Արիսողոմ ազա, ազգին գործը յես չը նայիմ, դուն չը նայիս, ան չը նայի, ո՞վ նայի ուրեմն, ինչուս պետքը շատ գեշ բան ե, անով ամեն մարդ մեկ զի կը քաշի և ազգին գործերն ալ յերեսի վրա կը մնան: Իմ գիտցածս՝ ամեն մարդ ձեռքեն, եկածին չափ ազգին գործերուն ալ աշխատելու յե: Ուրեմն մտիկ ըրեք այսորվան գլխուս յեկածները: Այս առտու, մեր թաղին ազգային դրոսարանը գացած ժամանակս, ձեզմե ազեկ չըլլա, մեր բարեկամներեն Մեղքոն ազային հանդիպեցա: Այս Մեղքոն ազան նախ Բարթողիմիոս ազային աղջիկն առած եր: Բարթողիմիոս ազան ալ

ժամանակով մատով կը ցցունեն յեղեր, իրեկ բարի մարդ, հյուրասեր մարդ, ազգասեր և բարեպաշտ մարդ և շուկային մեջ շատ խանութներ ուներ, վորոնցմե տարեկան բավական յեկամուս կաններ: Քանի մը տարին Մեղքոն ազային կինը մեռավ և Մեղքոն ազան համաագործ նիկողոսին աղջկանը հետ կարգվեցավ, այս աղջիկն քանի մը յեղբայրներ ունի, վորոնց մեկը Մարգար յեպիսկոպոսին քրոջն թոռան յեղբոր վորդին եր, մյուս յեղբայրն առնոք շատ պարագ պատեցավ, խեղճության մեջ ինկավ, անութութենե պիտի մեռներ, վերջեն թաղական ընտրվեցավ և մեկ յերկու տարին ինքընքը ժողվեց: Յերբոր յեղբայրը շուկային մեջ ժամագործ ե, բարձր հասակով սիրուն մարդ մ'ե, բայց շատ վարպետ ժամագործ ե: Թորոս ազան, վոր և վոչ մեկ ժամագործի կը հանձնե յուր ժամացույցն, անոր կուտա, վոր մաքրե: Այս Թորոս ազան կը ճանչնաք, ուրիշ տեսակ մարդ ե, անոր մեկ պատմությունը ընեմ քեզի և մտիկ ըրե, վոր տեսնես թե աշխարհիս վրա ասանկ մարդ կը գտնվի յեղեր վոր...

ՇՈՂԱԿԱԹ—Բերեմ ապուրը:

ՄԱՆՈՒԿ—Քիչ մը համբերե, տիկին, խոսքս ընցունեմ, վերջը բեր, ախպես չե՞, Արիսողոմ ազա, խոսք պետք ե յա, յեթե մտիկ ընելու ժամանակ չունիք և գրուխնիդ կը ցավցունեմ կոր, ըսեք:

ԱՔԻՍՈՂՈՄ—Ադ ինչ խոսք ե... բա...

ՄԱՆՈՒԿ—Այս Թորոս ազան աղանջը խոսի, ժամացույցին վիշիները մաքրել տալու համար ժամագործի մը կերթա և հեղը սակարկություն սկսելով վերջապետ տասնեկինգ դահեկան կը հավնի տալ, այն պայմանով, վոր ժամագործն յուր առջեվը մաքրե ժամացույցը, վասն զի Թորոս ազան աղանջը խոսի, ինչպես ըսի և վոչ մեկու մը վստահություն ունենալով, չեր ուղեր յուր ժամացույցն ժամագործին հանձնել և յերթալ, վախենալով, վոր ժամացույցին մեջեն բան մը կը դողցվի, կամ ժամագործը դիտմամբ կավրե ժամացույցն մեծ ծախք մը բանալու համար, ժամագործն յուր պատվույն գեմ անարգանք կը համարե Թորոս ազային առաջարկությունն և և կը բարկանա: Յեթե դուն ըլլայիք ժամագործին տեղը, չեյիք բարկանար:

ԱՔԻՍՈՂՈՄ—Կը բարկանայի:

**ՄԱՆՈՒԿ**—Թորոս աղան, ահանջը խոսի, կրակ կը կտրի ժամագործին բարեկանալուն վրա և քանի մը ծանր խոսքեր կընեն իրեն, վոր ընելու չեր, այնպես չէ:

**ԱՔԻՍՈՂՈՄ**—Այնպես է:

**ՄԱՆՈՒԿ**—Ծեծկվողքը կսկսի, ժամագործն ապտակ մը կը գարնեն թորոս աղային, ահանջը խոսի, Թորոս աղան կից մը կուտա ժամագործին, կարծեմ ով ալ ըլլար Թորոս աղային տեղը, ուրիշ կերպով չպիտի կրնար պատասխանել ժամագործին ապտակին: Վտարդ պագնեմ, Արիսողոմ աղա, ըսե, այնպես չէ:

**ԱՔԻՍՈՂՈՄ**—Դձուք ալ հոս տոմարեանով կը շինեք:

**ՄԱՆՈՒԿ**—Տոմարեանով:

**ԱՔԻՍՈՂՈՄ**—Այո, ուրիշ տեղեր տոմարեանով կը շինեն չեղեր:

**ՄԱՆՈՒԿ**—Ժամացույցը:

**ԱՔԻՍՈՂՈՄ**—Վճիռ ժամացույցը:

**ՄԱՆՈՒԿ**—Թորոս աղային:

**ԱՔԻՍՈՂՈՄ**—Թորոս աղան ո՞վ է:

**ՄԱՆՈՒԿ**—Մտիկ չըրիք ուրեմն ըրած պատմութեանս:

**ԱՔԻՍՈՂՈՄ**—Ըրի, կատարյալ մտիկ ըրի:

**ՄԱՆՈՒԿ**—Ե, գառնանք ուրեմն մեր խոսքին... ուր մնացինք... հա, Թորոս աղային վրա յեր: Տարտրինակ մարդ մ'ե այս Թորոս աղան, ահանջը խոսի, շատ պատմութեաններ ունի, ուրիշ գիշեր մ'ալ գանտնք կը պատմեմ և ժամանակ կանցունենք: Յերկար չընենք, առ առտու հանդիպեցա Մելքոն աղային...

**ՇՈՂԱԿԱԹ**—(Ներս կը փագե կերակուրը ձեռքին) Բերի վոր տաք տաք ուտեք:

**ԱՔԻՍՈՂՈՄ**—Այո, այո, ուտենք, վասն զի շատ անտի յեմ:

**ՇՈՂԱԿԱԹ**—Ամա ի՞նչ ընենք, Արիսողոմ աղան կերակուրներուս չպիտի հալնի չեղեր: Միտաֆիր ումտուղուտու յեմեղ, պուլտուղուտու յեր հա, հա, հա, անանկ չե մի, ամա, Արիսողոմ աղա, շիտակը գրուցե, դուն շիտակը խոտոզ մարդ ես, վայ, Արիսողոմ աղա, վայ, Արիսողոմ աղան յապանչի չե քի, վախնամ, վոր յերթա ուրիշ տուներ մեր կերակուրը ավրե, Արիսողոմ աղան թեքիֆսիդ է, այսոր չպիտի ճանչնանք գիրտոր յա, վտարդ պագնեմ, Արիսողոմ աղա, իրավունք չունիմ մի, ամա... ասանկ հա, Արիսողոմ աղա, այս գիշեր մեզի պիտի գաս յեղեր, վայ, Արիսողոմ աղա, վայ...



Արիսողոմ աղա  
Լ. ՉՈՂԱԿԱԹ

**ՄԱՆՈՒԿ**—Լմնցուր, վոր յես ալ խոսիմ, յերեսփոխանի մը չափ յերկար կը խոսիս, կնիկ:

**ՇՈՂԱԿԱԹ**—Տեր վողորմյա, բերանդ ո՞վ բռնած է, Արիսողոմ աղային նոր տեսած եմ տե՛ ուրախութենս ինչ ընելիքս չեմ գիտեր կոր, հրամանեցեք:

**ՄԱՆՈՒԿ**—Ապուրը մինչև վոր պողի, այս որվան գեղարք պատմեմ գոնե:

**ՇՈՂԱԿԱԹ**—Մանուկ աղա, Արիսողոմ աղայի գլուխն մի ցավցուներ, այս գիշեր հոգնած է, թերևս չախորժիր:

**ՄԱՆՈՒԿ**—Արիսողոմ աղա, կաղաչեմ, յես կուզեմ վոր դուն եյլ-  
լենմիշ ըլլաս, չե նե ինչ հասկցա: Յես կուզեմ, վոր հյուրս  
քեյֆիւնմիշ ֆերեհիւնմիշ ըլլա, կարծեմ թե սիրով մտիկ  
կընեք ազգային գործերը և բնավ ձանձրույթ չեք զգար:

**ԱՔԻՍՈՂՈՄ**—Այո, սիրով մտիկ կընեմ, բայց տիկիւնին ըսածին  
պես հոգնած եմ, վաղը գիշերվան թողունք:

**ՄԱՆՈՒԿ**—Շատ լավ, ինչպես վոր կուզեք այնպես ըլլա, բայց մեր  
թաղին թաղականին գործը շատ զվարճալի յե, Մեղքոն ա-  
ղան յեթե հոս ըլլար և պատմեր, խնդարեն կը ձաթեյինք:  
Տիկին, Արիսողոմ աղային գինի լեցուր:

**ՇՈՂԱԿԱԹ**—Մանուկ աղա, այս գիշեր այլանդակ խոսքեր կընես,  
ապուրի վրա գինի կը խմվի:

**ՄԱՆՈՒԿ**—Ինչո՞ւ չի խմվիր, տեսնենք պիտի համար մեր գինիին:  
(Կրկեցնե):

**ԱՔԻՍՈՂՈՄ**—Շնորհակալ եմ, գինի չեմ ուզեր:

**ՄԱՆՈՒԿ**—Մի մերժեք, կաղաչեմ:

**ԱՔԻՍՈՂՈՄ**—Ձեմ կարող խմել:

**ՄԱՆՈՒԿ**—Հատ մը, չեք թունավորվիր:

**ԱՔԻՍՈՂՈՄ**—Ձթունավորեր, բայց խելքս կըդառնա:

**ՇՈՂԱԿԱԹ**—Մի ստիպեր, Մանուկ աղա, խելքը կը գառնա կըսե  
կոր:

**ՄԱՆՈՒԿ**—Այս գինին թեթեւ է:

**ՇՈՂԱԿԱԹ**—Արիսողոմ աղա, հոս մը խմե, այս գինին թեթեւ է,  
կըսե կոր:

**ԱՔԻՍՈՂՈՄ**—Կը խնդրեմ, մի ստիպեք:

**ՇՈՂԱԿԱԹ**—Սանանկ ե նե՞ մի ստիպեր, Մանուկ աղա:

**ՄԱՆՈՒԿ**—Մեկ հատով ինչ կըլլա, յեղբայր:

**ՇՈՂԱԿԱԹ**—Ան ալ շիտակ է, Արիսողոմ աղա, դուն ալ հոս մը  
խմե, մեկ հատով մարդ չըմեռնիր:

**ԱՔԻՍՈՂՈՄ**—Ձեմ կընար նույնիսկ մեկ կաթիլ:

**ՇՈՂԱԿԱԹ**—Մանուկ աղա, ալ կարճ կապե, մեկ կաթիլն անգամ  
խմել չի կընար յեղեր:

**ՄԱՆՈՒԿ**—Մեկ գավաթն ախորժակ կը բանա, ոգտակար է:

**ՇՈՂԱԿԱԹ**—Յեկուր, Արիսողոմ աղա, գավաթ մը խմե, ախորժակ  
կը բանա և խնդիրն ալ կըլիննա: (Կր խմե, սեղանեն կելնե)

**ԱՔԻՍՈՂՈՄ**—(Հայր մերք բսելեն վերջը) Փառք քեզ աստված քա-  
հանայի մը պես կերս կշտացա... Վոր սենյակին մեջ պի-  
տի պառկիմ յես:

**ՇՈՂԱԿԱԹ**—Հրամմեցեք, Արիսողոմ աղա, վեր յելեքը:

Արիսողոմ աղան կր բարձրանա վերին սենյակը:

Մանուկ աղան յեվ Շողակարբ բարի գիշեր մաղթելով դուրս կելնե

**ԱՔԻՍՈՂՈՄ**—Վերջապես խախեցա այս մարդոց ձեռքեն, մար-  
դըս միայն յուր տունին մեջ կընա հանգիստ ըլլալ: Մինչև  
ժամը 11 անոթի մնա, վերջն ալ գորով քացախ խմե... բե-  
րանիդ հարմար կերակուր մի գտնար, պարապ խոսքեր մտիկ  
ըրե, ինչո՞ւ համար, քաղաքավարութեան համար, այս քա-  
ղաքավարութեան տակեն պարզապես եշություն կելնե  
կոր... (Կսկսի համար) պարզապես ըսելու էյի իրենց, թե  
յես կերակուրս կ'ունուի կուտեմ. քացախ խմելու սովորու-  
թյուն չունիմ, շատախոսութեաններե կը ձանձրանամ,  
Մանուկ աղա և զքեզ յերկու ժամ մտիկ ընելու հա-  
մար՝ յերկու վոսկի կուզեմ, յերկու վոսկիին լումա  
մը պակաս յեթե սաս, չեմ ընդունիր, չե նե բնավ պե՞ք չու-  
նիմ գիտնալ, թե Մարտիրոս աղան վորու աղան է, թե Գեվորգ  
աղան վորուն հայրն է, թե ժամագործը թորոս աղային  
ապտակ հաներ է, թե թորոս աղան ալ ժամագործին կից  
ավեր է կամ այսպես վարվելու չեյին հետ կամ բացեն ի  
բաց զրուցելու էյի թե ձեր ըրածը պարզապես եշություն  
է... Ասկից յեաքը ընեղիքս գիտեմ (Անկողնու մեջ) պարապ  
տեղ ժամանակ չպիտի կորսնցնեմ և վոչ ալ ստակ, ին-  
չո՞ւ պետք իմին... յես յեկած եմ հոս կարեվոր գործով,  
կին մը պիտի առնեմ, Պոլիս հաստատվիմ և այս կերպ ա-  
նուն մ'ալ վատակիմ, գործս ալ լայնցնեմ, Տրապիզոնն  
այլեւ նեղ կուզա ինձի: Յեթե վստղը սա լրագրին մեջ իմ  
անունս ալ փառավորապես գրվի, այն ատեն շատերը հե-  
տաքըքրություն պիտի ունենան ինձի հետ տեսնվելու, ա-  
մեն մարդ պիտի իմանա վաղը, վոր մեծ մարդ մը յեկած  
է Կ. Պոլիս ազնվախոհ, ազնվասիրտ, լեզվագետ, ուսումնա-  
կան, դաստիարակյալ, կրթյալ, և այլն մեկը, այն ատեն շա-  
տերը պիտի աղաչեն ինձի, վոր իրենց աղջիկն առնեմ...  
անոնց մեջն հարուստ, պարկեշտ աղջիկ մը կը գատեմ...  
խոսկալը կընեմ, նշան կուտամ... կը կարգվիմ... (Կսկսի  
համար)

Յերածնություն: Կամաց-կամաց կուտանա:  
Արիսողոմ աղան կգորբնի: Առավոտ է:  
Կմտնե Շողակարբ:

**ՇՈՂԱԿԱԹ**—Արիսողոմ աղա, կաղաչեմ, ըսեք ինձի, խանվեն կա-  
թիլ կը խմեք, թե առանց կաթի:

**ԱՔԻՍՈՂՈՄ**—Կաթ կը խմեմ առանց խանվելի:

ՇՈՂԱԿԱԹ—Կաթ բերեմ ուրեմն:

ԱՔԻՍՈՂՈՄ—Այն կաթ բերեք:

ՇՈՂԱԿԱԹ—Արիսողոմ ազա, մեծապատիվ եֆենդին հասուկ բարեվներ զբեզադ և ձեզի: (Լրագիր կհանձնե յեվ դուրս կելին):

ԱՔԻՍՈՂՈՄ—Ուր ե, աուր նայինք (Թերթը կարդալով) «Վանեն հետեվյալը կը գրեն մեզ» աս չե, վարինը կարգանք «Հայաստանի ինդուստրիալ նկատմամբ դեռ պատասխան չտվալ բարձրագույն գուուր վեց տերություններու համիմաստ ծանուցագրին» կերեվի թի պատասխան չունի տալիք, մյուսը նայինք. «Թագական մը պղտիկ գոււմար մը կաունե թաղին անտուկեն և իր աղջիկը կը կարգե» աս ալ չե, մյուս յերեսն անցնինք. «Այսոր մայրաքաղաքս յեկալ Արիսողոմ կաթողիկոսն (պաուզա) հը... վնչ՝ այսոր մայրաքաղաքս հասալ Սըսո Մկրտիչ կաթողիկոսն» ասոնց մեջ իմ անունս չկա, սա կտորը նայինք. «Մայրաքաղաքիս ազնվական դասույն անդամ մ'ալ ավելցալ այս որերս: Յերեվելի վաճառական և բազում ազարակներու տեր, ազգասեր, լեզվագետ, ազնվասիրտ և վեհանձն Արիսողոմ եֆենդին, վոր մեր ազգայնոց ծանոթ և, յերեկ Տրապիզոնի շոգենավով մայրաքաղաքս յեկալ և ուզղակի Բերա յեկալ Ծաղկի փողոց թիվ յերկու տունը: Արիսողոմ եֆենդին պես մեկու մը մայրաքաղաքս դալն անշուշտ մեծ ուրախություն պիտի պատճառե մեր բարեմիտ ազգայնոց:

ՇՈՂԱԿԱԹ—(Ներս մտնելով) Հրամանեցեք, ձեր կաթը խմեցեք:

ԱՔԻՍՈՂՈՄ—(Կարթ խմելով) Հըմ... առաջները կաթին մեջ քիչ մը ջուր կը խառնեյին, տասնյեվինը յերրորդ դարուս մեջ ջուրին մեջ քիչմը կաթ կը խառնեն:

ՄԱՆՈՒԿ—(Ներս գալով) Ե, Արիսողոմ ազա, ինչպես եք նայինք, հանդիսս քնացա՞ք:


ԱՔԻՍՈՂՈՄ—(Թերթը ցույց տալով) Տես, ինչ գրած և ինձի համար: Գուուր կգրենն յեվ ներս կըմտնե բաճատեղծը:

ԲԱՆԱՍՏ.—(Արիսողոմին դիմելով) Վսեմափայլ տեր, ձեր գալուտան լսելով փութացի հոս գալ իմ խորին մեծարանացս հավաստին ձեր վտաքերուն տակը դնելու:

Ծոցին բուրբ մը կը համե յեվ բարձր կը կարդա Տյարբ յեվ Տիկհայք..

ԱՔԻՍՈՂՈՄ—Ո՞վ և այս մարդը, հիմարանոցեն փախած խեղճ և թե հիմարանոց յերթալու հիմար:

ԲԱՆԱՍՏ.—Հայ ազգն այսոր այնպիսի հանդես կը կատարե, վոր մեր հայրենյաց ամենեն քաջ դյուցազնին նվիրած և:



III պատկեր  
Մանուկ, Շոշոկ, Բանաստ, Արիսողոմ

ՄԱՆՈՒԿ—Միաքղ ի՞նչ է, յեղբայր:

ԲԱՆԱՍՏ.—Կար ժամանակ մը ուր խաղարը լուսո գեմ կը կըռ-  
վեր, ագիտությունը գիտության գեմ, անցյալն ապառնիին  
դեմ, հրամայականը սահմանականին դեմ, սուրը գրիչի դեմ,  
միաք ընկալանքի դեմ, իսկ հիմա անցան աշն ժամա-  
նակները, անոնք անցյալ են մենք ապառնի, անոնք խա-  
վար են մենք լույս, անոնք ագետ են մենք գիտուն, ա-  
նոնք սուր են մենք գրիչ, անոնք ստեղծություն են մենք  
սեր, անոնք կրակ են մենք ջուր, անոնք միս են մենք  
բանջարեղեն, անոնք վարունգ են մենք խնձոր, անոնք  
փուշ են մենք վարդ, անցան-անցան այդ զարերը ու մարդ-  
կությունը ագիտության օրորոցին մեջ մեյմը սագին, մեյ-  
մը անգին կերթար, կուգար...

ՄԱՆՈՒԿ—Միաքղ ի՞նչ է յեղբայր, մենք քեզի բան<sup>ք</sup> մը չըրինք,  
ի՞նչ կուգես մեզմե, գնա քեզի բարկացնողին զրուցե այդ  
խոսքերը:

ԲԱՆԱՍՏ.—Այո, մարդկությունը, կը շարչարվեր, կը նախաավեր  
անգութ բոնավորներու ձեռքեն և չեր գիտեր վերու յեր-  
թալ և վորու բողոքեր:

ՄԱՆՈՒԿ—Տեր վողորմյա... տեր վողորմյա...

ԱՐԻՍՏՈՂՈՄ—Քաշելիք ունինք յեղեր:

ՄԱՆՈՒԿ—Յեղբայր, կազաչեմ, վար իջիւր և աշնպես զրուցե ցավդ:

ԲԱՆԱՍՏ.—Իսկ յերբ յեկալ գիտությունն և վանեց ագիտու-  
թյունն, ինչպես լույսն խավարը, սերն ստեղծությունը, ա-  
պագան անցյալը, աշն ստեն, աշն, կըսեմ աշն ստեն միաշն  
հասկցիւեցան, վոր մարդկություն, ազգ և հայրենիք բառերը  
բառաբաններ լեցնելու համար շինված բաներ չեյին, այլ  
ամեն մարդու մտքին մեջ, սրտին մեջ, հոգվույն մեջ, յեր-  
կաթյա ստորերով և անջինջ կերպով գրոշմելու բառեր  
եյին...

ԱՐԻՍՏՈՂՈՄ—Վար իջիւր սըկե:

ԲԱՆԱՍՏ.—Կազաչեմ, մի սաստեր զիս:

ԱՐԻՍՏՈՂՈՄ—Վար իջիւր, ապա թե վոչ...

ԲԱՆԱՍՏ.—Մի կտարեր սիրտս, վոր ազգին համար կը բարբախե:  
ԱՐԻՍՏՈՂՈՄ—Ինչ ըսելիք վոր ունիս, յեկուր քովս, մարդու պիտ  
նստե և ըսե, հոն տեղվանքը յեղնել ի՞նչ պիտի ըլլա:

ԲԱՆԱՍՏ.—Կազաչեմ, թող սուր վերջացնեմ, ահ, չես գիտեր վոր-  
չափ կը հուզվիմ յերբ ձառ կը կարգամ:

ԱՐԻՍՏՈՂՈՄ—Վար իջիւր: (Բանաստեղծը կիջնե) հիմա զրուցե ին-  
ձի, միաքղ ի՞նչ է:

ԲԱՆԱՍՏ.—Ծառուղ կը փափագի գրականությամբ ազգին ծա-  
ռայել, բայց այս ազգը շատ ապերախտությամբ կը վարվի  
յուր գրագետներուն դեմ:

ԱՐԻՍՏՈՂՈՄ—Աղբո մեջ յիս ի՞նչ հանցանք ունիմ:

ԲԱՆԱՍՏ.—Դուք հանցանք չունիք և թերեւ իրավունք ունիք,  
վոտանավորներ ունիմ գրած հայրենիքի վրա, սքանչելի  
կտորներ, պատվական տողեր, վորոնց մեջ յերեվակայու-  
թյունը, խանդն, հուրն ու բոցը սավառնաթեղ կը սլանան:  
Մեր ազգն անոնց հարգն ու պատիվը չը ճանչնար, զանոնք  
ազայական բաներ կը կարծե և թող կուտա, վոր զանոնք  
գրողը անոթի մնա:

ԱՐԻՍՏՈՂՈՄ—Յես ի՞նչ ընեմ:

ՄԱՆՈՒԿ—Ան ի՞նչ ընե:

ԲԱՆԱՍՏ.—Բարկությամբ միք վարվի հետս վոտքերնիդ պագ-  
նեմ, սիրտս լեցված է, հիմա կսկսիմ լալ:

ԱՐԻՍՏՈՂՈՄ—Տեր աստված, դուն համբերություն սուր ինձի:

ԲԱՆԱՍՏ.—Կուզեյի ձեզի իմ սիրտը բանալ... բայց... (Մանուկ  
աղային յեղ կնոջն ախնարկելով):

ԱՐԻՍՏՈՂՈՄ—Բաց նայեմ (հասկցնելով Մանուկ աղային, վոր  
զուրս յեղնե):

Մանուկ աղան յեղ Շողակարը զուրս կերպն

ԲԱՆԱՍՏ.—Խնդրեքս սա յեր, վոր կուզեյի տպել տալ քիչ մը  
առաջ կարդացած ձառս:

ԱՐԻՍՏՈՂՈՄ—Գնա տպել սուր, քու ձեռքեդ բռնող կ՛մ:

ԲԱՆԱՍՏ.—Պիտի խնդրեյի ձեր մեծապատվութենն, վոր տպա-  
գրության ստակը դուք տայիք:

ԱՐԻՍՏՈՂՈՄ—Ինչո՞ւ, ի՞նչ պատճառ կա, վոր քու ձառիդ համար  
յես դրամ տամ, լաված բան է, վոր մեկը իրեն շահուն  
համար գիրք տպե և ծախքն Արիստղոմը տա, գնա բանիդ,  
յեղբայր, փորձանք յեկար գլխուս:

ԲԱՆԱՍՏ.—Գիտե՞ք վորքան ծանր է գրագետի մը ասանկ խոս-  
քեր լսելը:

ԱՐԻՍՏՈՂՈՄ—Չեմ գիտեր և գիտնալ ալ չեմ ուզեր:

ԲԱՆԱՍՏ.—Բանաստեղծի մը սիրտը շատ փափուկ է ու ամենա-  
թեթեղ խոսքե մը կը վերավորվի, այս նյութին վրա վո-  
տանավոր մը գրած ունիմ, կարգամ մտիկ ըրեք:

ԱՐԻՍՏՈՂՈՄ—Յես վոտանավոր մտիկ ընելու չեկա հոս:

**ԲԱՆԱՍՏ.**—Շատ լավ, վողբերգութիւն մը գրած եմ, անոր վրայ  
յեն անցնինք:

**ԱԲԻՍՈՂՈՄ**—Չեմ ուզեր, յես բաղնիք պիտի յերթամ:

**ԲԱՆԱՍՏ.**—Շատ լավ, լողանալուն վրայ ատենաբանութիւն մը  
ընեմ:

**ԱԲԻՍՈՂՈՄ**—Ա՛լ փրկութիւն չը մնաց, ըրե, ինչ կուզես ըրե:

**ԲԱՆԱՍՏ.**—Մինչդեռ յերկնից դշխոյն հետզհետե յուր ճառա-  
գայթներն ամփոփելով կը պատրաստվիր յուր աթոռն ալ  
արեգակին, այն պահուն անա մերկացա և նետվեցա հեղուկ  
և կապույտ սավանի մը վրայ, վոր անհուն եր: Նետվելուս  
պես սավանը հանեց փրփուրներ, վոր ժամանակավ ծնունդ  
տվին Աստղիկին գեղեցկության, սարսուռ գագացի... քիչ մը  
սողացի այս սավանին վրայ և անա արեկն յերավ յուր պա-  
լատեն և յուր առաջին շողն կաթեցավ աչքիս մեջ, վո՛հ,  
այդ առաջին ճառագայթն, թվեցավ ինձ կուսի մառաջին  
նայվածքն, վոր ժպիտով մը կուզովի բանաստեղծին: Հուզ-  
վեցավ ծովն, յես ալ հուզվեցա, դուն չհուզվեցամ, ով կույս...  
կույս ով չը հուզվեցամ դու... կույս հուզվեցամ չը դու  
ով... դուրս յելա դողալով, դողողալով, հագվեցա և մնաս  
բարով ըսի ծովուն, արեկուն...

**ԱԲԻՍՈՂՈՄ**—Շատ աղեկ, հասկցանք, բաղնիքին ստակն սվ տը-  
վավ:


**ԲԱՆԱՍՏ.**—Բարձր բանաստեղծութիւններու մեջ ստակի խոսք  
չըլար, ամոթ ե:

**ԱԲԻՍՈՂՈՄ**—Այսուամենայնիվ բաղնիքանն մինչև վոր դրամը  
չառնե, թող չտար ներս մտներ:

**ԲԱՆԱՍՏ.**—Ադ ուրիշ խնդիր ե, մեր խոսքը գրականության վրայ  
յե և վոչ թե ծովուն բաղնիքին վրայ:

**ԱԲԻՍՈՂՈՄ**—Յես ալ կուզեմ, վոր նկարագրութիւն մը մեր  
առջեվ պարզված տեսարաններն ճշտութեամբ պատկերե  
առանց բան մը դուրս ձգելու, գարունը նկարագրող վո-  
տանավորի մը մեջ բնալ չեմ տեսած եշ մը, վոր դոս, ա-  
քաղաղ մը, վոր խոսի, գառնուկ մը, վոր մայե, հնդկահալ  
մը, վոր կլուկլուկե և դուն ալ փոխանակ «այս առտու  
ծով մտա» ըսելու ինչեր միայն չըսիր, ասանկ պարապ  
խոսքերու յես ստակ չեմ տար:

**ԲԱՆԱՍՏ.**—Կազաչեմ քաղցրութեամբ վարվեցեք հեղինակներու  
հետ:



Աբիսողոմ յե ծառայք — աջ կողմ ԱՐՇՈՐՈՒՆՅԱՒՆ Կ, ձախ՝ ԽԱՆՍԹՅԱՆ Ա.

**ԱՅԻՍՈՂՈՄ**—Գլխուս վրա նստեցունեմ քեզի:  
**ԲԱՆԱՍՏ.**—Վոտքդ պահենեմ, մի ծաղրեք զիս, ինչո՞ւ ձեռք գլխուն վրա նստեցունեք:  
**ԱՅԻՍՈՂՈՄ**—Ինչ ընեմ հապա, քսակս քեզի տամ հեղինակներու հետ քաղցրուծյամբ վարված ըլլալու համար:  
**ԲԱՆԱՍՏ.**—Վոչ, միայն ճառիս տպագրության ծախքը, չորս վոսկիով կը լրմննա, բան մը չե, իմ մեկենասս պիտի ըլլաս, յես ալ քու անուշոգ վոտանավորով մը գրքուչկիս ճակատը պիտի դնեմ:  
**ԱՅԻՍՈՂՈՄ**—Ճակատը պիտի դնես:  
**ԲԱՆԱՍՏ.**—Այո, վորպեսզի ամեն մարդ գիտնա, թե ձեր ստակովը տպված ե այն գիրքը:  
**ԱՅԻՍՈՂՈՄ**—Շատ լավ (վոսկիին տալով) Բայց ըսածներուս համաձայն գրածներդ շտկես:  
**ԲԱՆԱՍՏ.**—Անպայման, վսեմափայլ տեր, մնաք բարով:  
**ԱՅԻՍՈՂՈՄ**—Կեցիք, շաբաթե մը պատրաստ կըլլամ:  
**ԲԱՆԱՍՏ.**—Շաբաթե՞ մը... Ինչ կըսեք, մեկ ամսն հազիվ կընամ պատրաստել:  
**ԱՅԻՍՈՂՈՄ**—Մեկ ամսն: Այդ ինչ դժվար բան ե յեզեր:  
**ԲԱՆԱՍՏ.**—Ինչ կարծեցիք հապա, յերկու ամիս պիտի սպասեմ, վոր մուսաս դա և ներշնչե ինձի, վորպեսզի գրեմ, առանց մուսայի վոտանավոր չը գրվի:  
**ԱՅԻՍՈՂՈՄ**—Յեթե մեկ յերկու վոսկի տանք, այս շաբթու կուզամ:  
**ԲԱՆԱՍՏ.**—Այո, յերկու վոսկի տալուդ պես գործը կը դյուրիննա և մուսաս ալ այս շաբթու վաղելով կուզա:  
**ԱՅԻՍՈՂՈՄ**—(Վնաբելով յերկու վոսկի):  
**ԲԱՆԱՍՏ.**—Մնաք բարյավ տեր, շնորհակալ եմ ձեզմե, ծառայեմ ձեռք մեծապատվությանը և կաղաչեմ, ընդունեք խորին հարգանացս հավաստիքը, տեր... վորով մնամ ձեր մեծապատվության ամենախոնարհ ծառա: (Դուրս կերթա):  
**ԱՅԻՍՈՂՈՄ**—Այս մեկն ալ գեշ չե, ասոնք ըտրոն ալ իրենց վոտքերով կուզան ինձի ծառայելու, ամենքն ալ իրենց արվեստը իմ ոգտին կը ծառայեցնեն, իմ անունս, իմ փառքս կը տարածեն ազգիս մեջ, այս ինչ ազվոր քաղաք ե յեզեր, վսյ Աբխազում աղա, վայ, յես չեցի գիտեր, վոր ամենն ալ ինձի համար ե չեղեր, ըսել ե ուզածիս պես կընամ վարվիլ ամենուն հետ և անանկ ընթացք տալ գործին, վոր յես շահիմ:

Ներս կըմտնե Մանուկ աղան լրագիրը ձեռքին

**ՄԱՆՈՒԿ**—Գնաց... Ինչ կուզեր այդ մարդը:  
**ԱՅԻՍՈՂՈՄ**—Վոսկի կուզեր:  
**ՄԱՆՈՒԿ**—Ե, տվի՞ր:  
**ԱՅԻՍՈՂՈՄ**—Ե, ինչո՞ւ տայի:  
**ՄԱՆՈՒԿ**—Ինչ գիտնամ, անոնք մինչև վոր ստակ չառնեն՝ չեն յերթար: Բայց ինձի մտիկ ըրե, Աբխազում աղա: (Երբ կը կարգա) «Ազգային յերեսփոխանական ժողովո բացումը տեղի պիտի ունենա հառաջիկա ամսին. Ս. Պատրիարքն բացման առթիվ պիտի խոսի հայքաղաքականության վրա: Ազգայիններն անհամբեր կըսպասեն պատրիարքին բերնեն ավետիս առնելու համար»: Այս անգամ հույս աստված, ազգիս վիճակը պիտի բարեփոխվի և ազգս պիտի յուր վիճակը տնորինե:  
**ԱՅԻՍՈՂՈՄ**—Ա՛խ, անգամ մը յերեսփոխան ընտրվեյի, Մանուկ աղա:  
**ՄԱՆՈՒԿ**—Անգամ մը թաղական ընտրվեյի, Աբխազում աղա:  
**ԱՅԻՍՈՂՈՄ**—Ե, յեկուր մտմտանք, Մանուկ աղա, ինչ ճամբա բռնելու յե, վոր նպատակնիս իրագործվի:  
**ՄԱՆՈՒԿ**—Ձեր գործը դյուրին ե, ըսածիդ պես ստակ ունեցողին ամեն տեղ ալ հրամանեք կընեն, իմին գործս ե դժվար, բայց յես ալուրիշ ճամբաներով պիտի աշխատիմ ուղածս ընելու և գործն ալ լմնցնելու պես ե, այսոր վաղը քվարկություն պիտի ըլլա և յես մեծամասնություն պիտի շահիմ, թաղական ընտրվելես յետքը աստ՞ո ողնությամբ հեղբեթ յես ալ որ մը քեզի պիտի հասնիմ...  
**ԱՅԻՍՈՂՈՄ**—Ձգեստներս ինչպես են, Մանուկ աղա:  
**ՄԱՆՈՒԿ**—Աղեկ են, բայց ձեզի պես խոշոր մարդու մը, վոր խոշորներու հետ պիտի նստի կայնի, ավելի աղեկը հազնեներու յե, թող վոր հազածներդ մողայեն ալ յետ կը մնան—հոս հազուատի մեծ կարեվորություն կը արվի, Աբխազում աղա:  
**ԱՅԻՍՈՂՈՄ**—Ե, յերթանք, Մանուկ աղա, հազուատ մը ապսպրենք, յես յես մնալ չեմ ուզեր, Մանուկ աղա:  
**ՄԱՆՈՒԿ**—Ե, ինչո՞ւ յետ մնաք, յերթանք:  
**ԱՅԻՍՈՂՈՄ**—Յերթանք, յերթանք, յես յետ մնալ չեմ ուզեր, Մանուկ աղա, յերթանք սա հազուատին խնդիրը լմնցունենք և կատարենք պտույտ մը Պոլոս թաղերուն մեջ: (Դուրս կեղևնե):

Վ. Ա. ՐԱԳՈՒՅԸ

# ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ ՅԵՐԿՐՈՐԿ

## ՊԱՏԿԵՐ ԶՈՐՐՈՐԿ

### ՍՐՆԱՐԱՆ

Բեմը կենդանացնել պոլսական տիպիկ սրճարան մը, վարուն մեկ մառը փողոց կերկնում: Սրճարանի մեջ բուլթ, դամիս, նարդի կը խաղան:

**ՍՏԵՓԱՆՈՍ**—Ի՞նչ կը մամտաս, չդնե՞ս քարը:

**ՀԱԿՈՒՑ**—Չմտածալու ի՞նչ կա...

**ԲԱՐԹՈՂԻՄԵՆՈՍ**—Ի՞քի լեբը:

**ՍՏԵՓԱՆՈՍ**—Յեկուր քեզի բախի մը տամ, աս իրիկուն մերեխ-լենմիշ ես չեղեր:

**ԹՈՐՈՍ**—Սե յեք:

**ՏԻՄՈԹԵՆՈՍ**—Ա, Աբրահամ աղա, քովս յեկուր, քովս յեկուր նա-յինք, Աբրահամ աղային խահվեն հոս քերեք: Եյ, նե վար, նե յոք բազալում:

**ԱԲՐԱՀԱՄ**—Սաղլըդը՞նդ:

**ԲԱՐԹՈՂԻՄԵՆՈՍ**—Հեփ յեք:

**ՏԻՄՈԹԵՆՈՍ**—Ծո աղա, սա նոր թուղթերեն բեր:

**ԱԲՐԱՀԱՄ**—Ինձի հրաման տվեք, վոր յերթամ, հիմա ժամանակ չունիմ:

**ՏԻՄՈԹԵՆՈՍ**—Չե, չե, բարթի մը թուղթ խաղանք, ալթմիշ ալթի կը սիրեք, թե սքամբիլ:

**ՀԱԿՈՒՑ**—Աղբար, աչքի լուս թափե, մինչե իրիկուն աշխատե ու ճեպդ փարա մը չըլա:

**ԹՈՐՈՍ**—... կելա...

**ՍՏԵՓԱՆՈՍ**—Վողջութունը ըլլա, ատամ, շատ մտածալն ալ աղեկ բան չե, կըսեր մամո:


**ՀԱԿՈՒՑ**—Յերեկ մարդուն մեկը անթուրթենե անդի աշխարհը գացեր է:

**ԹՈՐՈՍ**—Շեշ բեշ:

**ՍՏԵՓԱՆՈՍ**—Ի՞նչ կըլա յերթալով, վողջութունը ըլլա:

**ԱԲՐԱՀԱՄ**—Մնաք բարով:

**ՏԻՄՈԹԵՆՈՍ**—Նատե, պե մարդ, վաղը անտու յես գործի չպի-



Մանուկ աղա

Վասակալորդերասան Յ. ԱՄԵՐԻԿՅԱՆ

տի յերթամ, դուն ալ մի յերթար, ժամանակ կանցունենք հոս:

**ԱԲՐԱՀԱՄ**—Չե ճանրմ, չորուզ չոճուխի տեր եմ, գործ ունիմ, եֆենախմ, գործ:

**ԹՈՐՈՍ**—Փենջ սե:

**ՏԻՄՈԹԵՆՈՍ**—Բարեկամաց ալ խաթրը կը սեպեն քիչ մը, եֆեն-

տըմ, խաքր իշին չէյ թավուք յեինիր:

ԱԲՐԱՀԱՄ—Պե ճանըմ, փոխանորդ մը ձգեմ յերթամ:

ՏԻՄՈԹԵՆՈՍ—Այս տեղը պատրիարքարանն չէ:

ԹՈՐՈՍ—Չահար սե:

Կը մտնեն Մանուկ աղան յեվ Արիստղոմ աղան

ՄԱՆՈՒԿ—Հրամմեցեք, Արիստղոմ աղան: (մատուցողին) եֆխա-  
րխատո քերէյե: Մեղեն եյի մի տիր:

ՆԻԿՈՂԱԿԻ—Ալեյա թենիդտեն սիմդի ձգմըս թազե-թազե քա-  
վուրմուսուսմ:

ՄԱՆՈՒԿ—Բիբ աղ եքմեկ յուլա:

ՆԻԿՈՂԱԿԻ—Ալեսթա:

ՀԱԿՈՒՐ—Տեանինք կրնամ վերեսիյն առնել այս գիշեր հացն:

ԹՈՐՈՍ—Դյորդ բեշ:

ՄՏԵՓԱՆՈՍ—Հոգ մի ընեք, կառնես, չառնես նե ալ մերթս մը-  
նեք, հացազործին խերն եմ անիծեր... վողշու-թլուն ըլլա:

ԲԱՐԹՈՂԻՄԵՆՈՍ—Փենջ սե:

ՄԱՆՈՒԿ—Մաստիկա կը խմեք, Արիստղոմ աղա:

ԱԲՐԱՀԱՄ—Վոչ:

ՄԱՆՈՒԿ—Անանկ ե նե՝ տյուզ կը գործածեք:

ԱԲՐԱՀԱՄ—Վոչ:

ՄԱՆՈՒԿ—Ռոմ:

ԱԲՐԱՀԱՄ—Վոչ:

ՄԱՆՈՒԿ—Ըսել ե քոնյակ կը խմեք:

ԱԲՐԱՀԱՄ—Վոչ:

ՄԱՆՈՒԿ—Ըմպելիք չէս գործածեր:

ԱԲՐԱՀԱՄ—Վոչ:

ՄԱՆՈՒԿ—Վոտքդ պագնեմ:

ԱԲՐԱՀԱՄ—Վոչ:

ՄԱՆՈՒԿ—Իրանի կըսես:

ԱԲՐԱՀԱՄ—Ինչու սուտ խոսիմ:

ՄԱՆՈՒԿ—Աստվածդ սիրես:

ԱԲՐԱՀԱՄ—Չեմ խմեր:

ՄԱՆՈՒԿ—Կատակ կընես հետս:

ԱԲՐԱՀԱՄ—Ի՞նչ հարկ կա կատակ ընելու:

ՄԱՆՈՒԿ—Հիմա մաստիկա չէս խմեր դուն:

ԱԲՐԱՀԱՄ—Վոչ:

ՄԱՆՈՒԿ—Տյուզ:

ԱԲՐԱՀԱՄ—Վոչ:

ՄԱՆՈՒԿ—Բոմ:

ԱԲՐԱՀԱՄ—Վոչ:

ՄԱՆՈՒԿ—Քոնյակ:

ԱԲՐԱՀԱՄ—Վոչ:

ՆԻԿՈՂԱԿԻ—Ինչու կապրիս կոր ուրեմն:

ՄՏԵՓԱՆՈՍ—Կնիկ ես, ինչ ես, պե մարդ:

ՏԻՐԱՅՈՒ—Բերնին համը ինչ գիտես անիկա:

ԹՈՐՈՍ—Չգնավոր:

ՏԻՄՈԹԵՆՈՍ—Ողին չիմվի յեղեր, վայ ապուշ, վայ:

ՄԱՆՈՒԿ—Ամոթ ե, Արիստղոմ աղա, չիմել կըլլամ, այսօրնստոգնե-  
րուն վրազ պիտի խնդացնես:

ԱԲՐԱՀԱՄ—Հալա-հալա ստիպված եմ մայրաքաղաքիս որինացը  
հետեվիլ ե խմել ալ սորվիլ, միտով կերակուր կուտեմ յես:

ՄԱՆՈՒԿ—(Մատուցողին) Միտով կերակուր բեր մեզի, շեշ մ'ալ  
մաստիկա:

ՆԻԿՈՂԱԿԻ—Թուտ սուխտ Մանուկ եֆենտի:

ՏԻՄՈԹԵՆՈՍ—Շեքերլի:

ԱԲՐԱՀԱՄ—Բանա սադե:

ՆԻԿՈՂԱԿԻ—Շեքերլի տիր, սադե տիր:

ՏԻՐԱՅՈՒ—Աթեշ:

ՆԻԿՈՂԱԿԻ—Աթեշ:

ՄՏՏՈՒՅՈՂ—Կելիյոր:

ՏԻՄՈԹԵՆՈՍ—Աս ինչ գեշ թուղթ կը քաշեմ, աղբար:

ԱԲՐԱՀԱՄ—Բիքա քոզ քառասուն:

ՏԻՄՈԹԵՆՈՍ—Աղեկ թուղթերը դուն ես առեր:

ԱԲՐԱՀԱՄ—Բիքա տամա, քառոֆանդի... հիսուն:

ՏԻՄՈԹԵՆՈՍ—Աս չափ ալ աղեկ թուղթ քաշել:

ԱԲՐԱՀԱՄ—Յերկու հարյուր հիսուն:

ՏԻՄՈԹԵՆՈՍ—Վայ շուն շան վորդի թուղթ, վայ:

ԱԲՐԱՀԱՄ—Յերկու հարյուր հիսուն:

ՏԻՄՈԹԵՆՈՍ—Պե ատամ, քիչմը կամաց խաղա, վոր յես ալ տես-  
նամ ինչ ե ան, զըվերզվեր յերկու հարյուր հիսուն կըլլա  
կոր յեղեր...

ԱԲՐԱՀԱՄ—Հինգ հարյուր:

ՏԻՄՈԹԵՆՈՍ—Քեզի կամաց խաղա ըսինք, աղբար, մախսուս զիս  
բարկացնելու համար կընես կոր... յես քեզ ընեմ նե հոչք  
կուզամ...

ՄԱՆՈՒԿ—(Ներս մտնողին փոքր վագե[ով] Բարեվ. պաբոն Մամբ-  
րե, ինչ ըրիր նայինք, քվեարկությունը յերկու որեն պի-  
տի ըլլա:

ՎԱՐԺԱՊԵՏ—Տեսա, խոսեցի, հոս պիտի ըլլան, քիչձը նազ կընեն,  
բայց թաղականության քվեն քեզի կուտան. անհոգ յեղիր,  
Մանուկ աղա:

ՄԱՆՈՒԿ—Տեսնենք հույս աստված, դուն հոս նստե, յես ալ կու-  
գամ, հչուր ունիմ գուցե անոր սայայեն սա աղաներու  
բերանը բան մը ձգենք:

ՎԱՐԺԱՊԵՏ—Հյուրդ ով ե:

ՄԱՆՈՒԿ—Տրապիզոնցի յի:

ՎԱՐԺԱՊԵՏ—Հարժուտ ե:

ՄԱՆՈՒԿ—Ունի:

ՎԱՐԺԱՊԵՏ—Վորքան:

ԱԲՐԱՀԱՄ—Հաղար:

ՏԻՄՈԹԵՈՍ—Հաղար:

ՎԱՐԺԱՊԵՏ—Հաղար:

ՏԻՄՈԹԵՈՍ—Մուխլախ աս թուղթին մեջ բան մը կա, դուն  
թուղթերը կը ճանչնաս կոր: (Թուղթեր կը նետե):

ՎԱՐԺԱՊԵՏ—Անունը:

ՄԱՆՈՒԿ—Աբխտղոմ աղա:

ՎԱՐԺԱՊԵՏ—Աբխտղոմ աղան ե:

ՄԱՆՈՒԿ—Հարմար առիթ կըլլա կըմոտենաս: (Կերքա):

ՎԱՐԺԱՊԵՏ—Շատ աղեկ:

ԱԲՐԱՀԱՄ—Կտոր մը մխտով՞մարդ կը կշտանան, զրուցե սա ան-  
պիտանին. վոր քիչ մը շատկեկ բերե:

ՄԱՆՈՒԿ—Ծո սղա, հոս լեկուր, կտոր մը մխտով՞մարդ կը կշտա-  
նան, քիչ մը շատկեկ բեր:

ՍՏԵՓԱՆՈՍ—Պոն ժուր, մոսյո Մամբրե:

ՎԱՐԺԱՊԵՏ—Պոն ժուր, մուշու:

ԱԲՐԱՀԱՄ—Յերկու հարյուր հիսուն գրեմ:

ՏԻՄՈԹԵՈՍ—Գրե, պե ատամ, գրե ըսինք ա:

ԱԲՐԱՀԱՄ—Գրեմ, բայց...

ՏԻՄՈԹԵՈՍ—Գրե ըսինք աղբար, գրե, ըսինք:

ԱԲՐԱՀԱՄ—Անանկ մեկ շեշտով կըսեր կոր վոր...

ՏԻՄՈԹԵՈՍ—Գեշ խոսք մը չըրինք, գրե, ըսինք:

ԱԲՐԱՀԱՄ—Ըսիք, բայց...

ՏԻՄՈԹԵՈՍ—Գրե, պապամ, գրե... գեշ խոսք մը ըրինք, աղաներ,



Շողակար  
ԱՐՈՒՍ ԱՍՐՅԱՆ

դուք ըսեք, գրե ըսինք, ուզածիդ չափ գրե ըսինք, վաստը-  
կեցար բարթին, խմե, խոհվեղ անուշ ըլլա, շատ աղեկ կը  
խաղաք կոր... յես չիյտեմ կոր խաղալ... հալլա... հալլա...  
ՎԱՐԺԱՊԵՏ—Եֆեստիմ, մի կովիք, ամոթ ե, հայության պատիվը  
պահելու յե ուր ալ վոր ըլլաք, հաշովեցեք:  
ՄՈՒՐԱՅԿԱՆ—(Աբխտղոմին) Վողորմություն տվեք ինձի, հիմա  
անմիջապես, շուտ, գործ ունիմ, պիտի յերթամ, չեմ կրնար  
սպասել:

ԱԲՐԱՀԱՄ—Աս ինչ լեզու յե:

ՄՈՒՐԱՅԿԱՆ—Իմ լեզուս աս է, հերիք ե քաղաքավարութեամբ վարվեցանք, աղաչեցինք, պաղատեցինք, այսուհետեվ այս լեզվով պիտի խոսիմ, պետք է անմիջապես ոգնեք ինձի:

ՄԱՆՈՒԿ—Ապա թե վոչ...

ՄՈՒՐԱՅԿԱՆ—Ապա թե վոչ բռնութեամբ պիտի առնեմ, վոչորմութուն տվեք, շնտ, հիմա:

ԱՔԻՍՈՂՈՄ—Շատ աղեկ, բայց ինչպես չեղավ, վոր մուրացկանութեան սկսար:

ՄՈՒՐԱՅԿԱՆ—Առանց պատճառն իմանալու չե՞ս ուզեր ոգնել աղքատի մը, վոր վորմութուն կը խնդրե քեզմէ:

ԱՔԻՍՈՂՈՄ—Վոչ:

ՄՈՒՐԱՅԿԱՆ—Գետինն անցնիս, ճակտիդ քրտինքովն ապրիս, գրականութեան ասպարեզին վրա տեսնեմ գրեզ... կըխընդաս... վնաս չունի, բայց անա ձեռքս վեր առնելով նորեն կանիծեմ գրեզ, վարժապետ ըլլաս:

ԱՔԻՍՈՂՈՄ—Լռե, լռե:

ՎԱՐԺԱՊԵՏ—Ո՛վ է, ինչ կուզե:

ՄԱՆՈՒԿ—Ի՛նչ յեղավ ձեզի, Աբխողոմ աղա:

ԱՔԻՍՈՂՈՄ—Այս վերջին անեծքը շանթարհարեց զիս, առ բարեբեկամ սա վորմութունն ու լուծե վերջին անեծքը:

ՄՈՒՐԱՅԿԱՆ—Շնորհակալ եմ... աստված չերկար որեր տա, կարկտեն, յերկրաշարժեն, ծովն ու վարժապետութենն ազատ պահե գրեզ, մնաք բարով:

ՄԱՆՈՒԿ—Դուք ալ վորչափ կըվախնաք, Աբխողոմ աղա, վարժապետութենն:

ԱՔԻՍՈՂՈՄ—Ո՛վ չվախնար, չեղբայր:

ՄԱՆՈՒԿ—Յեթե այդչափ կըվախնաք, Աբխողոմ աղա, ապահովել տվեք ինքզինքնիդ վարժապետութեան դեմ:

ԱՔԻՍՈՂՈՄ—Յեթե անանկ ապահովութեան ընկերութուն մը ըլլար, վարկյան մը չեյի կենար:

ՍՏԵՓԱՆՈՍ—Վորմութունը ինչո՞ւ կուշացնես, ըսե, կուզեն՝ տուր, ո՞վ է այդ մարդը:

ՎԱՐԺԱՊԵՏ—Աբխողոմ աղան է:

ՀԱԿՈՒՑ—Վ՞եր Աբխողոմ աղան:

ՍՏԵՓԱՆՈՍ—Ի՞նչ կըսես...

ՏԻՄՈԹԵՈՍ—Մտնուկ աղա, վարկյան մը մեզի յեկուր:

ՄԱՆՈՒԿ—Հիմա կուգամ, Թորոս աղա:

ՎԱՐԺԱՊԵՏ—Ի՛նչ կուզեր ձեզմէ այդ անպիտանը, թող չըտվեց վոր հանգիստ կերակուր ուտեք. Աբխողոմ աղա:

ԱՔԻՍՈՂՈՄ—Ձեր մարդասիրութենն շատ շնորհակալ եմ:

ՎԱՐԺԱՊԵՏ—Քանի անգամ կուվեր եմ հետերնին, վոր այս բնավորութունը փոխեն, բայց վորո՞ւ կըսես:

ԱՔԻՍՈՂՈՄ—Շատ բարի մարդ եք:

ՎԱՐԺԱՊԵՏ—Աբխողոմ աղա, ծառագ՛ իմ վրաս առած եմ դպրոցին անորինութունը ու կըկառավարեմ և ազգիս ծառայութուն կընեմ:

ԱՔԻՍՈՂՈՄ—Մարդս ալ յուր ազգին ծառայութուն ընելու յե:

ՎԱՐԺԱՊԵՏ—Նոր յեղանակով նոր դասադրքեր ալ հանած եմ, անոնցմէ հարյուրի չափ ձեզի տալ կուզեյի:

ԱՔԻՍՈՂՈՄ—Դասագիրքը ի՞նչ պիտի ընեմ յես:

ՎԱՐԺԱՊԵՏ—Ձեր ծանոթներուն կուտաք, կաղաչեմ խնդիրքս մի մերժեք, դպրոցիս ոգտին վորոշ գումար մը չե՞ք կրնար նվիրել, վոր վաղվանն քանի մը բարենորոգումներ կարողանամ մտցնել հոն և դուք ալ այցելելիք ու ձեր աչքերով տեսնայիք, թե ինչպեսի հայ մայրեր կը դաստիարակվին մեր ազնիկներն, յեղեք մեր բարերարը մեծապատիվ տեր, և ձեր անունը պատմութեան մեջ փառավոր եջեր պիտի գրե:

ԱՔԻՍՈՂՈՄ—Չ՞ըլլար, վոր այդ ըսածնիդ վոչ թե պատմութեան, այլ դպրոցին ճակատը գրվի:

ՎԱՐԺԱՊԵՏ—Յեթե բարեհաճիք հանձն առնել դպրոցին ծախքը, վոր մեծ բան մը չէ, այն ատեն ձեր անունով կը կոչենք գայն և ճակատին ալ ձեր անունը կը փորագրենք, Աբխողոմ եֆեսոսի:

ԱՔԻՍՈՂՈՄ—Շատ աղեկ, հանձն կառնեմ. դպրոցին ճակատը քանդակել կուտաք իմ անունս, թերթերուն մեջն ալ ծանուցումներ ըրեք, իսկ դրամի համար բան մը կընենք:

ՄԱՆՈՒԿ—Աբխողոմ աղա, ինչ բանի կարիք ունիք, մի քաշվիք կաղաչեմ ըսեք, վոր պատվիրեմ:

ԱՔԻՍՈՂՈՄ—Շնորհակալ եմ, կուզեմ գիտնալ, թե վ՞եր կողմն է (Մանուկի ակաեջին փափախով):

ՄԱՆՈՒԿ—Սանկ կերթաք, յետքին ձախ: (Աբխողոմ աղան դուրս կերթա):—(Վարժապետին) Առիթը չպետք է փախցունել, յես հիմա կերպով մը հոս կըհրավիրեմ սա աղաներուն, թող զըվարճանան վոր թաղականութեան քվեն անպատճառ ինձի տան, միայն խոսքը դուն բաց ըրե, վոր...

ՎԱՐԺԱՊԵՏ—Կըհասկնամ, միակ սեղանը թող ճոխ ըլլա:

ՄԱՆՈՒԿ—Աբխողոմ աղան վորջ ըլլա... (Կը մտնե Աբխողոմը):

**ԱՐԻՍՏՈՂՈՍ**—Կերեվի թե հոս տեղացիները մարդ տեսած չունին,  
անանկ ինձի կնային:

**ՄԱՆՈՒԿ**—Նոր մարդ եք, մեծ մարդ եք, ատոր համար կնային,  
ահա անիկա Ստեփանոս աղան ե: Բարի տեսանք, Ստեփա-  
նոս աղա: Ըսածդ կերպով ըրի, ձուկը աղով, լիմոնով, հա-  
մեմի մեջ դրի անհամ բան դուրս յեկավ:

**ՄՏԵՓԱՆՈՍ**—Չարմանալի յե:

**ՄԱՆՈՒԿ**—Կաղաչեմ, որ մը դաս ձեռքովդ պատրաստես:

**ՄՏԵՓԱՆՈՍ**—Պարտքս ըլլա:

**ՄԱՆՈՒԿ**—Նստեցեք, կաղաչեմ, բարեկամս ե, Արիստղոմ աղան,  
յերեվելի վաճառական, բազում ազարակներու տեր, ուս-  
յալ, կրթյալ, լեզվազետ...

**ՄՏԵՓԱՆՈՍ**—Յերջանիկ եմ:

**ՄԱՆՈՒԿ**—Դձու ալ հոս ես, Դիմոթեոս եֆենտի, ինդոբ ես, տի-  
կինդ ինչպէս ե:

**ՏԻՄՈԹԵՈՍ**—Շատ աղեկ ե:

**ՄԱՆՈՒԿ**—Հատկապես բարեվ կընեմ, է, չե՛րբ պիտի խալտի:

**ՏԻՄՈԹԵՈՍ**—Ամիսե մը, յեթե աստված կամենա:

**ՄԱՆՈՒԿ**—Մանչ կընամանի:

**ՏԻՄՈԹԵՈՍ**—Հայտնի չե:

**ՄԱՆՈՒԿ**—Մանչ ե առ աստված, տիկնոջդ ըսե, վոր չնստի, միշտ  
շարժումի մեջ ըլլա...

**ՏԻՄՈԹԵՈՍ**—Շնորհակալ եմ:

**ՄԱՆՈՒԿ**—Սանկ հրամմեցեք, ներկայացնեմ ձեզի բարեկամիս  
Արիստղոմ աղային, վոր մեր յերեվելի ազգայիններենչե  
ամենուն հայտնի, ուսյալ, կրթյալ, լեզվագետ...

**ՏԻՄՈԹԵՈՍ**—Բախտավոր եմ ծանոթ ըլլալուս համար:

**ՄԱՆՈՒԿ**—Ո՛ր, Հակոբ աղա փառք տիրոջը, վոր տեսնվեցանք, ուր  
եք, աղբար, ուր եք:

**ՀԱԿՈԲ**—Հոս եմ:

**ՄԱՆՈՒԿ**—Սանկ հրամմեցեք, կներկայացնեմ ձեզի Արիստղոմ ա-  
ղան, յերեվելի վաճառական, և ազգային, Պոլիս նոր ժա-  
մանած, բայց արդեն ամենուն հայտնի, ուսյալ, կրթյալ,  
լեզվագետ:

**ՀԱԿՈԲ**—Բախտավոր եմ ծանոթանալուս համար:

**ՄԱՆՈՒԿ**—Ո՛ր... վարժապետ, բնավ չես յերեվար, հոս հրամմեցեք,  
բարեկամս ե, Արիստղոմ աղան, ազգիս բարերար, ուսյալ,  
կրթյալ, լեզվագետ...



Բ ա ն ա ս ե ղ ծ Ա. Հ Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Յ Ա Ն

—«... Սիրքս լեցված ե արդեն, հիւս կսկսիմ լալ—...»

**ՎԱՐԺԱՊԵՏ**—Բարի աեսանք, Արիստղոմ եֆենտի:

**ՄԱՆՈՒԿ**—Բարեվ, տիրացու:

**ԲԱՐԹՈՂԻՄԵՈՍ**—Ծառն յեմ:

**ՄԱՆՈՒԿ**—Շատ ուրախացա, շատ ուրախացա քեզմե աղեկը

պիտի գտնայինք, ձեռնադրութուհդ յե՛րբ պիտի ըլլա:

**ԲԱՐԹՈՂԻՄԵՈՍ**—ամիսե մը:

**ՄԱՆՈՒԿ**—Ամիսն ի՛նչ ե, գալ շաբթու ձեռնադրվե, լմնա յեր-

թա: Անունդ պիտի փոխես:

**ԲԱՐԹՈՂԻՄԵՆՈՍ**—Այն, Ամբակում պիտի դնեմ:  
**ՄԱՆՈՒԿ**—Շատ հարմար անուն է, ծառա յեմ, տեր Ամբակում,  
նստե՛, կաղաչեմ, բարեկամս, Արխողոմ աղան...  
**ՏԻՄՈԹԵՆՈՍ**—Ամենուն հայտնի:  
**ՎԱՐԺԱՊԵՏ**—Ազգիս բարերար, ուսումնական վեհանձն...  
**ՍՏԵՓԱՆՈՍ**—Յերեվելի վաճառական, լեզվագետ...  
**ԲԱՐԹՈՂԻՄԵՆՈՍ**—Բարի տեսանք, Արխողոմ պեյ:  
**ՄԱՆՈՒԿ**—Թորոս աղան ալ հոս է, չըսե՛ք:  
**ԹՈՐՈՍ**—Բարի տեսանք, Մանուկ աղա:  
**ՄԱՆՈՒԿ**—Քովս նստե, բարեկամս է, Արխողոմ աղան:  
**ՍՏԵՓԱՆՈՍ**—Յերեվելի վաճառական է:  
**ՏԻՄՈԹԵՆՈՍ**—Ամենուն հայտնի:  
**ՎԱՐԺԱՊԵՏ**—Ազգի բարերար, ուսումնական, լեզվագետ:  
**ԹՈՐՈՍ**—Յերջանիկ եմ:  
**ՄԱՆՈՒԿ**—Աբրահամ աղա, քովս յեկուր, մինակ մի նստիր,  
բարեկամս է, Արխողոմ աղան, յերեվելի վաճառական, լեզ-  
վագետ: (Խմիչ՛ յեվ ուսելի՛ կը մատուցվի):  
**ՎԱՐԺԱՊԵՏ**—Բաժակ մը կառավարկեմ պատվավոր՝ սեղանակիցնե-  
րուս, կենդանություն:  
**ՄԱՆՈՒԿ**—Ատամ, պատվավորությունը ստակով կըլլա, անանկ  
չե՛, աղաներ:  
**ՎԱՐԺԱՊԵՏ**—Անանկ է, խմենք Արխողոմ աղայի կենդանու-  
թյանը:  
**ԱԲԻՍՈՂՈՍ**—Շնորհակալ եմ:  
**ՎԱՐԺԱՊԵՏ**—Աղաներ, յերկրորդ բաժակը խմենք մեր ազգասեր  
Մանուկ աղայի կենդանությանը, Մանուկ աղան պատվա-  
վոր մարդ է և ավելի պատվավոր կրնա ըլլալ յեթե ցան-  
կանք, վասնզի մեզմե յե կախված:  
**ՍՏԵՓԱՆՈՍ**—Ի՞նչ ըսել կուզես:  
**ՎԱՐԺԱՊԵՏ**—Փոխենք սա մեր թաղին թաղականությունը և  
տեղը մեր ծանոթներեն դնենք:  
**ԱԲԻՍՈՂՈՍ**—Ե՛, շատ աղեկ, բայց ի՞նչ հանցանք պիտի գտնաք  
զայն տապալելու համար:  
**ՏԻՄՈԹԵՆՈՍ**—Արխողոմ աղա, նախ և առաջ տապալելու վրա  
խորհինք, վերջը հանցանք մը կըզտնենք հարկավ... հան-  
ցանքներու սով չե, փառք աստծո:  
**ՎԱՐԺԱՊԵՏ**—Աղաներ, վար առնենք սա թաղին թաղականու-

թյունը և մեր Մանուկ աղային ընտրենք, ան ալ մեր ազգն  
է, թող քանի մը վոսկի ալ ան վաստկի, ի՞նչ կըսեք, աղաներ:  
Կը խոստանանք ուրեմն ձեր քվեն Մանուկ աղային տալու:  
**ՏԻՄՈԹԵՆՈՍ**—Կխոստանանք...  
**ՄԱՆՈՒԿ**—Յերախտապարտ եմ: Աղաներ, կաղաչեմ, անուշ ըրեք,  
խմեցեք, չենե Արխողոմ աղան ալ, չես ալ, պիտի վերա-  
վորվինք:  
**ԱԲԻՍՈՂՈՍ**—(Կողմ) ասոնք զիս քթես բռնած կողոպտել կուզեն,  
շատ աղեկ, աֆերիմ Մանուկ աղա, աֆերիմ:  
**ՄԱՆՈՒԿ**—Գործս շտկվեց, Արխողոմ աղա, թաղական պիտի ըլ-  
լամ քուկին սայայեղ:  
**ԱԲԻՍՈՂՈՍ**—Ի՞նչ ըսել կուզես:  
**ՄԱՆՈՒԿ**—Ըսել կուզեմ, սա ընթրիքին արժեքը վճարելու համար  
հինգ վոսկի տուր ինձի, մեկ, յերկու, չերեք չորս որեն կը  
վերադարձնեմ:  
**ԱԲԻՍՈՂՈՍ**—Ե՛, թողություն ըրեք, յես պիտի յերթամ: (Վաճի  
կելնե):  
**ՄԱՆՈՒԿ**—Ինչո՞ւ կշտապիք, Արխողոմ աղա, քիչ մ՛ալ զվարճա-  
ցեք:  
**ԲՈՂՈՐԸ**—Հարկավ, նստեցեք:  
**ԱԲԻՍՈՂՈՍ**—Չե, պիտի յերթամ: Վորքան պիտի վճարեմ:  
**ՆԻԿՈՂԱԿԻ**—Հինգ վոսկի:  
**ԱԲԻՍՈՂՈՍ**—Յես այդչափ բան չկերա:  
**ՆԻԿՈՂԱԿԻ**—Դուք չկերաք, բայց ձեր հյուրերը կերան:  
**ՄԱՆՈՒԿ**—(Գաղսնի Արխողոմին) Յեթե մերժելու ըլլաք այն ատեն  
ամբողջ քաղաքը պիտի բամբասե զձեզ ըսելով, թե անքա-  
ղաքավարի մարդ է, թե ստակ չունի, թող վոր չես ալ կը  
զրկվիմ սա թաղականութենեն:  
**ԱԲԻՍՈՂՈՍ**—Ա՛ն քեզ սա հինգ վոսկին, հաշիվը կըմաքրենք վեր-  
ջը: Նիկողակի, թող սեղանը ճոխըլլա:  
**ԲՈՂՈՐԸ**—Արխողոմ աղան վողջ ըլլա:

Վ Ա Ր Ա Գ Ո Ւ Յ Ի

# ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ ՅԵՐՐՈՐԴ

## ՊԱՏԿԵՐ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Մանուկ աղայի տունը

Բեմի վրա յե Շողակաքը, Աբխտղոմ յեվ Մանուկ աղան. զբաղված են իրեր կապկպելով:

**ՄԱՆՈՒԿ**—Աբխտղոմ աղա, իրերը կապվածվեն, բեռնակիրներուն կսպասենք: (Շողակաքին) Մա ծախուց մատչանն ինձի առը, նայինք:

**ՇՈՂԱԿԱՔ**—Մանուկ աղա, ըսածիս պես հաշվե, դրամի շատ պեաք ունինք, առաջվանը չե, հիմա յես թաղականի կին եմ, յես ալ իմ պահանջներս ունիմ, հասկցամ... քուզում:

**ՄԱՆՈՒԿ**—Դուն գործիդ նայե: (Մանուկը հաւելելով կըզբաղվի):


Դուռը կը գարնեն, Շողակաքը դուրս կելն:

**ՇՈՂԱԿԱՔ**—(Ներս մտնելով լրագիրը ձեռքին) Աբխտղոմ աղա, մեծապատիվ եֆենտին հատկապես բարեվ դրկած ե ձեզի: (Լրագիրը կըմեկնեն Աբխտղոմին):

**ԱԲԽՍՈՂՈՄ**—Տուր նայինք. (Կսկսի կարդալ) «Այսոր կառավարութունը ֆաջն վարդան Մամիկոնյանի պատկերները ժողովել տվավ հայ զբաղմանոսնոցներեն, կըսվի թե զանոնք հրացանի պիտի բռնեն», Մանուկ աղա, սա պատկերը վար բեր: (Վարդան Մամիկոնյանի պատկերը վար կառնեն):

**ՄԱՆՈՒԿ**—Կնիկ, զգուշ ըլլալու յե, սա պատկերը սնտուկը դընելու յե:

**ԱԲԽՍՈՂՈՄ**—Աս ինչ աղվոր քաղաք ե յեղեր Պոլիսը, ինչ վոր ընես կամ ընել ուզենաս թերթերուն մեջ կը տեսնիս, ահա (կը կարդա). «Տրապիզոնն քաղաքս յեկած Աբխտղոմ եֆենտին այսոր տեղափոխվեցավ իր նոր բնակարանը, Վոսփորի ափունքին Մահմուդ պեյի նախկին ափարթմանը, Աբխտղոմ աղան այդ տունը գներ ե հազար լիբա կանխիկ վճարով, մեզ հայտնի չե, վոր Աբխտղոմ աղան կը փնտրե նաև խոշոր ե հարմար շենքեր. քաղաքիս մեջ նոր վաճառատուններ բանալու համար: (Դուռը կը գարնեն, Շողակաքը



IV պատկեր  
Մ ր ն ա ռ ա ն

դուրս կելն): Յուրաքանչյուր աղգայինի պարտքն ե հետ այսու էրերը գնել Աբխտղոմ աղայի վաճառատունեն:

**ՄԱՆՈՒԿ**—Շատ աղեկ են գրեր:

**ՇՈՂԱԿԱՔ**—(Ներս մտնելով ծառնե կը հանձնեն) Աբխտղոմ աղա, մեծապատիվ եֆենտին հատկապես բարեվ դրկած ե ձեզի: Դուռը կը գարնեն, Շողակաքը դուրս կելն:

**ԱԲԽՍՈՂՈՄ**—Այսքան նամակները յես ինչպես կարդամ:

ՄԱՆՈՒԿ—Կշտանալով կը կարգաս:

ՇՈՂԱԿԱԹ—(Նետս մտնելով) Արիսողոմ աղա, մեծապատիւ կեֆենտին հատկապէս բարեւոյ զրկած ե ձեզի: (Կապոց մը քրեք կը հանձնեն):

ԱՔԻՍՈՂՈՄ—«Ձիթենի» Ձիթենի, սովելի աղեկ չե՞ր ըլլար յեթոյ այդչափ ձիթենիի տեղ ոխա մը ձիթապտուղ ուղարկեցին ինձի, ինչ պիտի ընեմ, ալ ասկից վերջը բերող ըլլա մի ընդունիր, ըսե Արիսողոմ աղան հոս չե և ճամբե:

ՄԱՆՈՒԿ—Արիսողոմ աղա, այս գրութիւնը կարդամ մտիկ ըրե:

ԱՔԻՍՈՂՈՄ—Ինչ ե, կարդա նայիմ:

ՄԱՆՈՒԿ—Ամսուս տասյերկուսին Արիսողոմ աղային հյուրընկալելու և անոր բոլոր պահանջներուն գոհացում տալու համար կը խնդրեմ յեռեսուն վոսկի:

ՇՈՂԱԿԱԹ—Վոչ թե յեռեսուն, այլ հիսուն:

ԱՔԻՍՈՂՈՄ—Այդ ինչ ըսել ե:

ՄԱՆՈՒԿ—Կը վախճաւ կոր ինձի հիսուն վոսկի տալե, արդեն այնքան գումար մը պահանջող եմ յես քեզմե, ձեզի համար այնքան ծախքեր ըրած եմ:

ԱՔԻՍՈՂՈՄ—Այնքան ծախքեր, ինչ ծախքեր են անոնք...

ՄԱՆՈՒԿ—Մեկիկ-մեկիկ գրած ունիմ, տիկինն ալ գիտե, բայց թողունք այդ խնդիրը:

ԱՔԻՍՈՂՈՄ—Վոչ, չթողունք այս խնդիրը, հիսուն վոսկի... քանի որ յեղալ վոր...

ՄԱՆՈՒԿ—Տհւր կըսեմ կոր նե, հարկալ բան մը գիտեմ կոր, տեր վողորմյա, պիտի առնեմ, չպիտի փախչիմ ա:

ԱՔԻՍՈՂՈՄ—Չպիտի փախչիս, բայց...

ՄԱՆՈՒԿ—Մեկու մը պարտք ունեցի, այսոր յեկալ նեղը խոթեց զիս և յեթե այդ գումարը չվճարեմ ասիկա ինձի համար ամոթ ե, քեզի համար ալ պատվաբեր բան մը չե, տուր սա հիսուն վոսկին հաշիվը կը կարգադրենք վերջը, աղջիկ գտնամ նե՝ միջնորդչեք չպիտի ուզեմ յես քեզմե, տուր սա հիսուն վոսկին:

ՇՈՂԱԿԱԹ—Չեր քիպարութիւնը չեցի ձգեր, վոր հիսուն վոսկիին խոսքն ընեք:

ՄԱՆՈՒԿ—Յես տակալին շատ պետք կուզամ ձեզի, Արիսողոմ աղա, յերեսփոխան ընտրվելու ճամբաները պիտի ցուցնեմ, բոնած գործերուդ կողմնեմ, յես ալ թաղական եմ, թաղին կալված-

ները ծախելու ըլլամ նե՝ աժան գնով ձեզի կհաջողցնեմ, ահւր սա հիսուն վոսկին:

ԱՔԻՍՈՂՈՄ—Շատ աղեկ, հիմա հասկցա, թե ինչու համար կուտամ սա հիսուն վոսկին, առաջուց ըսելու եյիր ատոնք, հրամեցեք, Մանուկ աղա: (Վոսկիները տալով):

ՄԱՆՈՒԿ—Շնորհակալութիւն, Արիսողոմ աղա, հուս ունիմ բարութեանդ տակին պատվով դուրս յեջնել, ե, միջնե վոր բեռնակիրները գան, մենք կընանք կիսատ թողած պատմութիւնս շարունակել:

Իուար կըգարեն

ՇՈՂԱԿԱԹ—(Նետս կուգա) Բեռնակիրները յեկան, Արիսողոմ աղա:

ՄԱՆՈՒԿ—Յ՝ թող քիչ մը սպասեն, չպիտի փախչինք յա:

ԱՔԻՍՈՂՈՄ—Չե, թող ներս գան, Մանուկ աղա, այդ խոսակցութիւնը վերջն ալ կընես, չպիտի փախչիմ յա:

ՄԱՆՈՒԿ—Թող այդպէս շլլա, վաղը քեզի կուգամ և կը զրուցենք...

ՇՈՂԱԿԱԹ—Մտեք: Արիսողոմ աղային սնտուկներն ու անկողինը վար բերեք: (Բեռնակիրները կը բարձրանան): Լեռնէն յեկաք դուք:

2-րդ ԲԵՌՆԱԿ.—Վոչ, մեծ փողոցն յեկանք:

ՇՈՂԱԿԱԹ—Գիտեմ վոր մեծ փողոցն յեկաք, այդ վտարի մաններով վեր կելնվի, տեսեք ինչ ըրիք տախտակներս, յես հիմա սրբեցի գանոնք և հողիս բերանս յեկալ:

1-ին ԲԵՌՆԱԿ.—Ինչ ընենք, ուրիշ վտարի աման չունինք:

ՇՈՂԱԿԱԹ—Ինչո՞ւ կայներ յերեսս կընալիք, չհանեք դրվոնք:

3-րդ ԲԵՌՆԱԿ.—Մի պուռար, տիկին, մի պուռար, կըհանենք: (Վտանաւանները կը հանեն):

ՇՈՂԱԿԱԹ—Այդ վտարներով պիտի յեջնեք:

1-ին ԲԵՌՆԱԿ.—Ինչ ընենք տիկին, աղքատ մարդիկ ենք, ուրիշ վտար չունինք, այս վտարներով պիտի յեջնենք:

ՇՈՂԱԿԱԹ—Վա՛ր իջեք, չեմ ուզեր, յես կբերեմ:

2-րդ ԲԵՌՆԱԿ.—Ատանկ ալելի աղեկ կըլլա: (Շողակաքը յեկ Մանուկ աղան իրերը վար կը բերեն, մտակները տակիկով դուրս կելնեն):

ՇՈՂԱԿԱԹ—Վայ, Արիսողոմ աղա, վայ, պիտի յերթնս յեղեր մեր քովն, ով կսպասեր, իրոք մեծ վիշտ մը բացեք սրտիս մեջ, ինչպէս մտնամ այն սենյակը և ձեզի հոն չտեսնիմ, ախ,

քուզում Աբխոզում աղա, չ'ըլլար վոր միշտ մեզի կենայիր և մեզի ալ քու ներկայութեամբ ուրախացնէիր: Վնյ, Աբխոզում աղա, վնյ, հիմա սեփական պալատիդ մեջ պիտի ապրիս ու մեզի մոռնաս, վնյ, Աբխոզում աղա, վնյ...

**ԱԲԽՈՂՈՄ**—Մնաք բարեւ, տիկին, մնաք բարեւ, Մանուկ աղա, շատ շնորհակալ եմ ձեր մարդասիրութենէն, ձեր հյուրասիրութենէն:

**ՇՈՂԱԿԱԹ**—Վնյ, Աբխոզում աղա, վաղը աղվորիկ աղջիկ՝ մը գլուխալուդ պես՝ իմ անունս բոլորովին պիտի մոռնաս:

**ԱԲԽՈՂՈՄ**—Անհոգ յեղեք, տիկին:

**ՄԱՆՈՒԿ**—Աբխոզում աղան անանկ ճարդ չէ:

**ՇՈՂԱԿԱԹ**—Աբխոզում աղան հպարտ չէ:

**ԱԲԽՈՂՈՄ**—Մտտուկներս...

**ՄԱՆՈՒԿ**—Աբխոզում աղան վեհանձն չէ:

**ԱԲԽՈՂՈՄ**—Բեռնա...

**ՇՈՂԱԿԱԹ**—Ազնիւ սիրտ մը ունի:

**ԱԲԽՈՂՈՄ**—...կիրներս...

**ՄԱՆՈՒԿ**—Մեզի չպիտի մոռնաս:

**ԱԲԽՈՂՈՄ**—Մտտուկներս առին տարին: (Կրկագե):

**ՇՈՂԱԿԱԹ**—Վնյ, Աբխոզում աղա, վնյ...

### Վ Ա Ր Ա Գ Ո Ւ Յ Ր

### Պ Ա Տ Կ Ե Ր Վ Ե Ց Ե Ր Ո Ր Դ


Աբխոզում աղայի տունը

Մեծ սենյակ, պատերը հայելիապատ, լճեմ պատուհանը կը ճայլէ՛վուսփորի վրա, բեմի վրա յեւ Աբխոզումն ու յերկու ծառաները:

**ՆԿԱՐԻՉ**—(Ներս կրմսնե քանի մը անձանորներու հետ): Բարեւ, վսեմափայլ տեր, նստեցեք, Աբխոզում աղա, կաղաչեմ, չվայելեր, վոր վտաքի յելնեք: Արդարեւ մեր պարտքն էր անմիջապես գալ և ձեր գալուստը շնորհավորել, բայց ուշ իմացանք ձեր գալը, ասոր համար հատկապես ձեր ներողամտութիւնը կը խնդրենք:

**ԱԲԽՈՂՈՄ**—Այսոր գալով պակասութիւն մը ըրած չեք ըլլար, վոր ներողութիւն կը խնդրեք:

**ՆԿԱՐԻՉ**—Ձեր քաղաքավարութիւնն է, վոր այդպես խոսիլ կուտա ձեզի, բայց մենք մեր պակասութիւնը միշտ կը ճանչնանք: Արդարեւ մեծ պակասութիւն մ'եր մեր ըրածը, ձեզի պես յերեւելի մարդ մը մայրաքաղաքս գա և նկարիչ



Ն ի կ ո լ ա կ ի Յ. Ն ի կ յ Ո Ղ Ո Ս Յ Մ. Ն

«...Այլ ա-թենիզդեմ սիմսի ձրգմըգ, քագե, Բագե քավուումուում...»

մը անմիջապես բարի յեկաքի չերթա, պակասութիւններու պակասութիւնը, վոր և վոչ մեկ կերպով մը կընա պակասութիւն ըլլալե դարարի:

**ԱԲԽՈՂՈՄ**—Ամենեկին պակասութիւն մը չէ, յեթե բնավ չը գայիք դարձյալ պակասութիւն մը չեր համարվիր ինձի համար:

**ՆԿԱՐԻՉ**—Շատ վեհանձն եք:

**ԱԲԽՈՂՈՄ**—Ամենեկին վեհանձն չեմ: (Բարձրաձայն) Ձույգ-

դույզ կընդունիմ: (Ծառաները դուրս կառաջնորդեն մնացյալներուն, կմնան նկարիչն ու բժիշկը):

Բժիշկ—Ծառագ վեց տարի Յեվրոպա մնացած ե ե բժշկություն սորված ե:

ՆԿԱՐԻՉ—Թող այնպես ըլլա...

Բժիշկ—Ծառագ վեց տարի...

ՆԿԱՐԻՉ—Ատոր համար հիմա...

ԱՌՏՈՂՈՄ—Մեկ-մեկ կընդունիմ: (Նկարիչը մեկ կողմը կը փառվի):

Բժիշկ—Ծառագ վեց տարի Յեվրոպա մնացած ե ե բժշկություն սորված:

ԱՌՏՈՂՈՄ—Աղեկ արվեստ:

Բժիշկ—Յերկու տարի յե հոս կը գտնվիմ ե մինչև այսօր հաղիվ չորս հիվանդ նայած եմ, հասկցիր թե ինչպես կը քաջալերվին հոս բժիշկները:

ԱՌՏՈՂՈՄ—Ցավալի բան, հոս տեղացիները հիվանդ ըլլալու սովորություն չունին:

Բժիշկ—Ունին, բայց հոս հիվանդները ազգային զգացում չունին, Հայաստանի վրա գաղափար չունին:

ԱՌՏՈՂՈՄ—Ի՞նչ կըսեք:

Բժիշկ—Այո, յերբ հայ մը հիվանդ ըլլա, ոտար ազգի բժիշկ կը բերեն յուր տունը, առանց գիտնալու, թե հայու ցավն հայը միայն կընա բժշկել: Առանց համոզվելու, թե ոտարը չի կընար հայու ցավին դարման ըլլալ: Վճի, ոտարսիրություն... ոտարսիրություն, յերբ պիտի յերթաս մեր քովին:

ԱՌՏՈՂՈՄ—Ոտարսիրությունը աղեկ բան չէ:

ՆԿԱՐԻՉ—Թող այդպես ըլլա. ատոր համար հիմա վիճաբանության մտնելու հարկ չեմ տեսներ, միայն ինքզինքս ձեր տրամադրության տակ կը դնեմ ե ձեր հրամաններուն կըստատեմ, յեթե կողքեք հոս քաշել տվեք, յեթե կը փափազիք մեր արհեստանոցը պատվել՝ հաճեցեք ե հոն քաշենք, ինձի համար միևնույն բանն ե. դուք ինչպես վոր կախորժիք, այնպես ընելու պատրաստ եմ:

ԱՌՏՈՂՈՄ—Ինչ պիտի քաշել տաք, իմ ահառներս աղեկ են:

ՆԿԱՐԻՉ—Գիտեմ վոր ձեր ահառները աղեկ են, ինչպես նայել դուք ալ աղեկ եք, յես կը փափազիմ ձեր դիմանկար պատկերը քաշել:

ԱՌՏՈՂՈՄ—Յես մինչև հիմա պատկերս ընամ քաշել տված

չունիմ ե քաշել տալու հարկ մ'ալ չեմ տեսներ, վասնզի ամեն որ հայելի կը նայիմ ե ինքզինքս կը տեսնեմ:

ՆԿԱՐԻՉ—Յեթե ձեր պատկերը մեկու մը դրկել ուզեք հայելին կընաք դրկել, Արիսողոմ աղա:

ԱՌՏՈՂՈՄ—Հայելին ինչո՞ւ դրկեմ, յես կըրթամ:

Բժիշկ—Արիսողոմ աղա, այն ազգը, վոր ազգասեր չունի յուր մեջ, ազգ չէ:

ԱՌՏՈՂՈՄ—Շիտակ ե:

ՆԿԱՐԻՉ—Բայց յես մինչև վոր ձեր...

Բժիշկ—Յե՛վ փոխադարձաբար, այն ազգասերն ալ վոր ազգ չունի, ազգասեր չէ:

ԱՌՏՈՂՈՄ—Անանկ ե:

ՆԿԱՐԻՉ—Ուստի, մինչև վոր յես ձեր պատկերը չհանեմ, չեմ կընար հանդիստ ըլլալ:

ԱՌՏՈՂՈՄ—Կեցիր, ջանում:

Բժիշկ—Ո՞ւր ե թե, Արիսողոմ աղա, բժիշկ ըլլալուս տեղ հիվանդ ըլլայի ե մեռնեյի:

ԱՌՏՈՂՈՄ—Մեկ-մեկ կընդունիմ: (Բժիշկը մեկ կողմ կը փառվի):

ՆԿԱՐԻՉ—Ինձի համար պատկերություն մ'ե ձեր պատկեր չհանել. թող վոր ձեզի համար ալ այնպես ե:

ԱՌՏՈՂՈՄ—Ինչու:

ՆԿԱՐԻՉ—Լսված բան ե, վոր ձեզի պես յերեվելի մարդ մը Պոլիս գա ե պատկերը նկարել չտա:

ԱՌՏՈՂՈՄ—Ինչ կըլլա:

ՆԿԱՐԻՉ—Բան մը չըլլար, բայց...

ԱՌՏՈՂՈՄ—Բայց ի՞նչ, ազարակներս կառնե՞ն ձեռքես:

ՆԿԱՐԻՉ—Ամենովին:

ԱՌՏՈՂՈՄ—Վաճառատուներս պիտի փակին:

ՆԿԱՐԻՉ—Բնավ յերեք... բայց արար աշխարհ ձեր վրա պիտի խնդացնեք, մեծ ամոթ ե:

ԱՌՏՈՂՈՄ—Մեծ ամոթ:

ՆԿԱՐԻՉ—Այո, մեծ ամոթ ե, անվարտիք պտտվիլն այնքան ամոթ չէ, վորչափ իրեն պատկերն չունենալը:

ԱՌՏՈՂՈՄ—Լրագիրները պիտի գրեն, վոր Արիսողոմ աղան յուր պատկերը քաշել տված ե:

ՆԿԱՐԻՉ—Լրագիրներու վերաբերյալ ինչի՞ր մը չէ աս:

ԱՌՏՈՂՈՄ—Ըսել ե թե յեկեղեցիներուն մեջ ծանուցում ալ չպիտի ըլլա:

ՆԿԱՐԻԶ—Ծանուցումի թնչ հարկ կա, Աբխաղոմ աղա, կը ծաղ-  
րէք:

ԱՅԻՍՈՂՈՄ—Ծաղրէլ, ատոր շատ դեմ չես... Թնչ իրավունք ու-  
նիմ ուրիշ մը ծաղրելու:

ՆԿԱՐԻԶ—Մի բարկանաք:

ԱՅԻՍՈՂՈՄ—Չէ, կը բարկանամ, չես բնավորութիւն մը ունիմ,  
վոր ամեն բան շիտակ կուզեմ:

ԲԺԻՇԿ—Ճշմարիտ աստված, ուխտ ըրած եմ, վոր՝ յեթե որ մը  
յերեվելի ազգայիններեն հիվանդ մը նաչիմ, անոր անունը  
լրագրներուն մեջ պիտի բարձրացունեմ:

ԱՅԻՍՈՂՈՄ—Աղեկ յեղավ, վոր այսոր հոս յեկաք, վասնզի քա-  
նի մը որե ի վեր վրաս գեշութիւն մը կզգամ:

ԲԺԻՇԿ—Ի՞նչ կզգաք:

ԱՅԻՍՈՂՈՄ—Գեշութիւն մը կըզգամ:

ԲԺԻՇԿ—Վճր կողմդ:

ԱՅԻՍՈՂՈՄ—Ամեն կողմս:

ԲԺԻՇԿ—Ախորժակդ ինչպէս է:

ԱՅԻՍՈՂՈՄ—Աղեկ է:

ԲԺԻՇԿ—Կերածդ շուտ կը մարսես:

ԱՅԻՍՈՂՈՄ—Շուտ կը մարսեմ:

ԲԺԻՇԿ—Գիշերները հանգիստ կքնանամ:

ԱՅԻՍՈՂՈՄ—Շատ հանգիստ, բայց վրաս գեշութիւն մը կզգամ:  
Գրելիքդ չմոռնաս: (Վուկիճն տալով):

ԲԺԻՇԿ—Ա՛... հասկցան, անհոգ յեղիք, լրագրին մեջ պիտի գե-  
տեղեմ ձեր անունը: Մնաք բարեւ, տեր, շնորհակալ եմ ձեզ-  
մե, Աբխաղոմ աղա: (Գուրս կերքա):


ՆԿԱՐԻԶ—Շատ տղեկ, թնչ դիրքով հանել կուզեք ձեր պատկերը:

ԱՅԻՍՈՂՈՄ—Միտք չունիմ պատկերս քաշել տալու, վասնզի  
անողուտ բան մը կերելիս ինձի:

ՆԿԱՐԻԶ—Ինչ կըսեք, ասկից ավելի ոգտակար թնչ կա, յեթե  
կարգված եք ձեր ամուսնունջն կղրկեք, վոր ձեր բացակայու-  
թյան ատեն անոր վրա նայելով՝ կարոտ տանե, յեթե ա-  
մուսնացած չէք, շատ աղջիկներ ձեր պատկերը կտեսնեն  
և ձեր ով ըլլալը կը հասկնան, վորով ընկերութիւններուն  
մեջ ձեր անունը կը խոսվի:

ԱՅԻՍՈՂՈՄ—Աղջիկները թնչպէս և ուր պիտի տեսնեն իմ պատ-  
կերս...

ՆԿԱՐԻԶ—Չէ վոր ձեր պատկերը պատկերահանդեսին մեջ պիտի  
կախեմ և բոլոր հետաքրքրվողներուն պիտի ցուցունեմ:



Մանկեր  
Ս Ր Ն Ա Ր Ա Մ

ԱՅԻՍՈՂՈՄ—Ցուցունելով թնչ պիտի ըլլա:  
ՆԿԱՐԻԶ—Ի՞նչ կուզեք վոր ըլլա, միշտ կը հիշվիք...  
ԱՅԻՍՈՂՈՄ—Յեթե չը հիշվեմ, ինչ կը կորսնցունեմ, հոգս եր-  
թմին, թե պիտի հիշեն, կուզեն հիշեն, կուզեն չը հիշեն,  
յես անանկ դատարկ բաներու ստակ չեմ տար և քու խոս-  
քերուդ ալ չեմ հավատար:  
ՆԿԱՐԻԶ—Ասիկա պղտիկ ենսյուլթ մ'ի:

ԱՔԻՍՈՂՈՄ—Ենայուլթն ո՞վ է:  
ՆԿԱՐԻԶ—Ենայուլթ, հը, ինձի ենայուլթ. շատ աղեկ, բայց գիտ-  
ցեք, վոր արտիստ մը վերավորեցիք ծանրտպես:  
ԱՔԻՍՈՂՈՄ—Յեա վերավորեցի:  
ՆԿԱՐԻԶ—Այո, դուք:  
ԱՔԻՍՈՂՈՄ—Գնա վոստիկանուլթյանը իմաց տուր, պարասպ  
խոսքեր մտիկ ընելու ժամանակ չունիմ:  
ՆԿԱՐԻԶ—Տեր, կը խնդրեմ, վոր ձեր խոսքերը նախ ձեր ուղե-  
ղին հանդիպին և հետո ձեր բերանեն յեջնեն:  
ԱՔԻՍՈՂՈՄ—Յես կուվի մեջ չեմ մտնիր և պարասպ տեղը ստակ  
չեմ տար, դուքս չե՞լ սըկե:  
ՆԿԱՐԻԶ—Դարձյալ ենայուլթ, ենայուլթ, ինձի ենայուլթ, վնաս  
չունի, բայց յես մինչև վոր ձեր կենդանագիր պատկերը  
չը քաշեմ, չեմ կրնար հանգիստ ըլլալ: (Աքիսողոմ աղա՛ն  
վոսկի մը կուտա նկարիչին յե՞վ դուքս կերավիրե): Յտեսու-  
լթյուն վսեմափայլ տեր, կընդունիմ վորպես կանխավճար:  
Մնաք բարով, տեր... (դուքս կերքա):  
ԱՔԻՍՈՂՈՄ—Այս չափ ալ աներես մարդ, սչս չնփ ալ աներես  
մարդ...  
ՄԱՆՈՒԿ—(Կըմսնե) Բարկացած կերեվիք, Աքիսողոմ աղա, վորո՞ն  
վրա չեք բարկացած:  
ԱՔԻՍՈՂՈՄ—Ենայուլթ, ենայուլթ վոսկի տուր—պատկերս պիտի  
քաշե չեղեր:  
ՄԱՆՈՒԿ—Ե՛, ինչպէս վորոշեցիք նայինք, պատկերը կես մեջքին  
պիտի քաշվիք, թե վոտքի վրա:  
ԱՔԻՍՈՂՈՄ—Վոչ կես մեջքեն և վոչ ալ վոտքի վրա:  
ՄԱՆՈՒԿ—Աթոռի մը վրա նստած պիտի քաշվիք:  
ԱՔԻՍՈՂՈՄ—Վոչ:  
ՄԱՆՈՒԿ—Պառկած պիտի հանվիք:  
ԱՔԻՍՈՂՈՄ—Վոչ:  
ՄԱՆՈՒԿ—Քովընդի:  
ԱՔԻՍՈՂՈՄ—Վոչ:  
ՄԱՆՈՒԿ—Կանգնած:  
ԱՔԻՍՈՂՈՄ—Վոչ:  
ՄԱՆՈՒԿ—Ինչպէս վորոշեցիք ուրեմն:  
ԱՔԻՍՈՂՈՄ—Վորոշեցինք, վոր մեր պատկերը ընավ քաշել չը-  
տանք:  
ՄԱՆՈՒԿ—Ատ չըլար, ատիկա մեծ պղտիկուլթյուն է, Աքիսողոմ

աղա, հիմա պղտիկներեն բռնե մինչև մեծերը գնա, ամե-  
նըն ալ տարին քանի մը անգամ պատկերնին քաշել կուտան,  
չերկու ամսու տղաներն անգամ իրենցն ունին, միայն ի-  
րենց մորը արգանդին մեջ գտնվողները չունին իրենց պատ-  
կերը, յեթե անոր ալ դյուրին մեկ ճամբան գտնեն տնոնցն  
ալ պիտի հանեն և յեթե դուք ալ չունենաս՝ քու վրադ  
աղեկ աչքով չեն նայիր, բոլոր մեծ մարդերն ասոնք ու-  
նին:

ԱՔԻՍՈՂՈՄ—Մեծ մարդերն ունին, աղեկ գիտես:  
ՄԱՆՈՒԿ—Այո, ունին:  
ԱՔԻՍՈՂՈՄ—Պղտիկներն ալ ունին, ըսիր հապա:  
ՄԱՆՈՒԿ—Պղտիկներն ուրիշ—անոնք լուսանկար պատկեր կը  
քաշեն փոքրիկ չափով, իսկ մեծերը խոշոր յուղաներկ—ա-  
հա, այս պես (ցույց կուտա կտաված նկար մը):  
ԱՔԻՍՈՂՈՄ—Սա սե՛վ աչքերով սե՛վ ինքովիներով մարդն ո՞վ է:  
ՄԱՆՈՒԿ—Ո՛, ազգային շոջ կհորջորջվի, Կարպետ Պեյ Յերամ-  
յանն է, մզկիթ մը շինել տված է:  
ԱՔԻՍՈՂՈՄ—Ի՞նչ:  
ՄԱՆՈՒԿ—Մզկիթ մը շինել տված է:  
ԱՔԻՍՈՂՈՄ—Ե՛, ինչո՞ւ իմ պատկերս ալ չեն կախեր, յես ալ  
հոս գալուս պես մեկենաս չեղա գիրքի մը, հիվանդ ատենս-  
հայ բժիշկ կանչեցի վրաս, թերթի մը բաժանորդագրվեցա,  
խոստացա դպրոցի մը տարուց ծախքը հոգալ, ասոնք ալ  
պղտիկ գործեր չեն յա:  
ՄԱՆՈՒԿ—Հոգ մի ընեք, Աքիսողոմ աղա, ձերինն ալ կը կախեն,  
ստակի խնդիր է, բարեկամս: Ձեր պատկերն ալ կը կախվի  
և կանձահանաք սերնդե սերունդ:  
ԱՔԻՍՈՂՈՄ—Հասկցա, ինչպէս հանել տալու յեմ ուրեմն պատ-  
կերս:  
ՄԱՆՈՒԿ—Թիկնաթոռի մը վրա նստած:  
ԱՔԻՍՈՂՈՄ—Կուզելի վոր սպասավորներս չերկուքն ալ չախելով  
գիմացես վնասելի, և անոնք ալ գլուխնին ծռած դուքս չե-  
նեյին... վերջապես ասանկ բաներ չի՞ կրնար ըլլալ... կամ  
թե մեկը ծեծեյի...  
ՄԱՆՈՒԿ—Ադոնց վրա վաղը խորհինք, մենք հիմա սկսինք մեր  
յերեկվա պատմությունը, վոր կիսատ մնաց, Մեղքոն ա-  
ղան զիս տեսնելուն պես մոտեցավ ինձի և...  
ԱՔԻՍՈՂՈՄ—Նարկիլեյով ավելի փառավոր չը՞լար:

**ՄԱՆՈՒԿ**—Մոտեցավ ինձի և ձեռքս բռնելով լրտավ. չեթե այսոր չաշխատինք, դուն թաղական չպիտի ընտրվիս:

**ԱՔԻՍՈՂՈՄ**—Սանկ տասը կանգուն յերկարությամբ մարբուճ մը...

**ՄԱՆՈՒԿ**—Իրավունք ունիք, մարբուճ մը շատ աղեկ կերեվա պատկերին մեջ, բայց և տյնպես մաքուր և շիտակ ըլլալու յե, թաղական ընտրվող մարդը:

**ԱՔԻՍՈՂՈՄ**—Դուք աղեկ կը ճանչնաք:

**ՄԱՆՈՒԿ**—Իմ ճանչնալս միտակ ոգուտ չընեք, քվեարկությամբ կընտրվի:

**ԱՔԻՍՈՂՈՄ**—Մ—Քվեարկութ մամբ:

**ՄԱՆՈՒԿ**—Այո, ըստ սահմանադրության, քվեարկությունը կընտրե:

**ԱՔԻՍՈՂՈՄ**—Ինչ կըսեք, թաղեցին քվե պիտի տա հիմա աղեկ մարբուճ մը ընտրելու համար:

**ՄԱՆՈՒԿ**—Թաղականի վրա չեր մեր խոսքը:

**ԱՔԻՍՈՂՈՄ**—Թաղականն ուսկից հանեցիր, մարբուճի վրա յեր մեր խոսքը...

Մտաայի առաջնորդությամբ ներս կմտնե Տ. Շուսանը:

**ՇՈՒՇԱՆ**—Յեթե գաղտնի խոսք մը ունիք, դուրս չելնեմ:

**ՄԱՆՈՒԿ**—Վնչ, թաղականի վրա կխոսեցինք:

**ՇՈՒՇԱՆ**—Գետնին տակը անցնի այն թաղականին խնդիրն ալ:

**ՄԱՆՈՒԿ**—Բարի յեկաք, աիկին:

**ՇՈՒՇԱՆ**—Բարի տեսանք, Աբիսողոմ աղա, քաղաքինս ինչպե՞ս գտաք, նայինք հավնեցա՞ք:

**ԱՔԻՍՈՂՈՄ**—Հավնեցա՞, շատ աղեկ է: (Կը նստի):

**ՇՈՒՇԱՆ**—Ո՛ւ՛՛՛, տանք է, սաստիկ տաք... կնիկները երիկներեն բաժնելու չափ տաք... հն, հն, հն:


**ՄԱՆՈՒԿ**—Այս կողմերը ի՞նչ գործ ունիք, դարձյալ նշանտուճք մը կա, ի՞նչ կա: Աղջիկ մ'ալ մեր Աբիսողոմ աղային չգտնան:

**ՇՈՒՇԱՆ**—Տիկինդ արդեն իմացուց ինձի, թե Աբիսողոմ աղան կարգված չե, և՞ յես ալ շիտակը անոր համար հոս յեկա (Մանուկ աղան անկասեղի դուրս կերթա):

**ԱՔԻՍՈՂՈՄ**—Անանկ միտք մը ունիմ:

**ՇՈՒՇԱՆ**—Յեթե անանկ միտք մը ունիք, ձեզի ալ կրնանք ձեր ուղածին պես աղջիկ մը գտնել, քսան տարի է ի վեր ալս գործին մեջ եմ, ամենուէն կճանչնամ, հրամանքնիդ ինչպե՞ս աղջիկ կուզեք, անգամ մը ան հասկնալու յեմ յես:

**ԱՔԻՍՈՂՈՄ**—Աղվոր աղջիկ մը կուզեմ:



Վարժապետ Ա. ՌՇՏՈՒՆԻ

«...Իմ վրաս առած շքաբացին սնորհնությունն յեվ... ազգիս ծառայություն կրնեմ...»

**ՇՈՒՇԱՆ**—Գիտեմ վոր աղվոր աղջիկ կուզես, ուղած աղջիկդ հարձուտ ըլլալու յե:

**ԱՔԻՍՈՂՈՄ**—Այո:

**ՇՈՒՇԱՆ**—Պարկե՞շա:

**ԱՔԻՍՈՂՈՄ**—Հարկնով:

**ՇՈՒՇԱՆ**—Տասնվեց—տասնութ տարեկան:

ԱՔԻՍՈՂՈՄ—Ճիշտ:

ՇՈՒՇԱՆ—Կարգվելը շատ անուշ բան է, քեզի հարմար աղջիկ մը գտար ամեն ոք արքայութեան մեջ ես...

ԱՔԻՍՈՂՈՄ—Յես ալ ասոր համար է, վոր կարգվել կուզեմ:

ՇՈՒՇԱՆ—Կինդ բնավորութեանդ չհարմարեցա՞յ, ամեն ոք դժոխքի մեջ էս, կրակներու մեջ կայրիս:

ԱՔԻՍՈՂՈՄ—Յես ալ ասոր համար է, վոր կարգվելի կ'ախնամ:

ՇՈՒՇԱՆ—Սերը ճիշտ գինիի պէս է, Արիսողոմ աղա, կա վոր հիննալով ավելի պատվական կըլլա և կա վոր չերթալով քացախ կը դառնա: Նայեցեք, ձեզի բան մը ըսեմ, աղաս, հրամանքնիդ հարկաւ մեծ տեղե աղջիկ կուզեք առնել, վասնզի դուք ալ մեծ մարդ եք:

ԱՔԻՍՈՂՈՄ—Այո, մեծ տեղե կուզեմ:

ՇՈՒՇԱՆ—Իմ ձեռքիս տակ ամեն դասե աղջիկ կա, բարձր դասեն, միջին դասեն և ստորին դասեն, այս չերեք դասեն ալ ծախու ապրանք ունիմ, հրամանքնիդ ձեր քսակին հետ խորհրդակցեցեք և ինձի ըսեք՝ սա դասեն կուզեմ: Հայտնի յե, վոր բարձր դասը շատ սուղ է, միջինը նվազ սուղ և ստորինն աժան:

ԱՔԻՍՈՂՈՄ—Յես աժանը չեմ ուզեր:

ՇՈՒՇԱՆ—Շատ աղեկ, հոգ մի ընեք, ամուսնութեանն արդեն ալ սոր բոլորովին առեվտուրի կարգն անցած է, աղջիկներն ալ ազնիվ մարդեն ավելի ազնիվ ստակ կը փնտրեն: Աղջիկը ձերմակ գուցն ունենա, թե քիչ մը թուլ:

ԱՔԻՍՈՂՈՄ—Ձերմակը կուզեմ:

ՇՈՒՇԱՆ—Աչքերը սե՛վ, թե կապույտ:

ԱՔԻՍՈՂՈՄ—Յեկուր տես, վոր սե՛վն ալ կը սիրեմ՝ կապույտն ալ:

ՇՈՒՇԱՆ—Կամ մեկը պիտի ըլլա, կամ մյուսը, վասնզի չի կըրնար ըլլալ անանկ աղջիկ մը, վորուն մեկ աչքը կապույտ ըլլա, մյուսը սե՛վ:

ԱՔԻՍՈՂՈՄ—Կապույտ ըլլա թող:

ՇՈՒՇԱՆ—Շատ լավ, հասակը, մազերը:

ԱՔԻՍՈՂՈՄ—Յերկար, չերկար:

ՇՈՒՇԱՆ—Մեջքը:

ԱՔԻՍՈՂՈՄ—Մեջքը բարակ ըլլա, բայց տկար չեմ սիրեր, կուզեմ վոր քալած ատենը միտերը շարժին:

ՇՈՒՇԱՆ—Կը հասկնամ, այս չափը հերիք է, ճիշտ ուղածիդ պէս աղջիկ մը կա, վոր շատ ալ պարկեշտ է և իրեն երկանը համար հոգի տալ կերեվի:

ԱՔԻՍՈՂՈՄ—Յես ալ ասանկ մեկը կուզեմ:

ՇՈՒՇԱՆ—Թերևս վաղը քու անունդ իրեն ըսելուս պես վրադ սեր կը կապե: Պատկերդ տուր, վոր իրեն անգամ մը ցցունեմ:

ԱՔԻՍՈՂՈՄ—Պատկերս վաղը քաշել պիտի տամ: Մեծ տեղէն է աղջիկը:

ՇՈՒՇԱՆ—Այո:

ԱՔԻՍՈՂՈՄ—Հայրը հարձուտ է:

ՇՈՒՇԱՆ—Շատ հարուստ է, բայց հարստութեանը չի ցցուներ:

ԱՔԻՍՈՂՈՄ—Շատ խանութներ ունի:

ՇՈՒՇԱՆ—Քսանի չափ:

ԱՔԻՍՈՂՈՄ—Տո՛ւն:

ՇՈՒՇԱՆ—Քառասունի մոտ:

ԱՔԻՍՈՂՈՄ—Շատ աղեկ, վաղը չե՛ մյուս ուրը յեկուր չերթանք աղջիկը տեսալու:

ՇՈՒՇԱՆ—Գլխուս վրա, ցերեկին կուզամ և մեկտեղ կերթանք: Մնաք բարով, Արիսողոմ աղա, սիրտդ հանգիստ ըռնե, յես քեզ չեմ խաբեր, ուրիշներուն պէս կրակի շապիկ հագցընողներեն չեմ, կեցիր բարով, վաղը չե՛ մյուս ուր:

Վոսկի մը առնելով Շուսեր կը մեկնի:

ԱՔԻՍՈՂՈՄ—Քսանի չափ, քառասունի մոտի Մանուկ աղա, Մանուկ աղա, հոս յեկուր (Մանուկ կը մտն): Գտանք, աղվոր, պարկեշտ աղջիկ մը գտանք:

ՄԱՆՈՒԿ—Հայրը հարձուտ է:

ԱՔԻՍՈՂՈՄ—Շատ հարուստ է, բայց հարստութեանը չցցուներ:

ՄԱՆՈՒԿ—Շատ խանութներ ունի:

ԱՔԻՍՈՂՈՄ—Քսանի չափ:

ՄԱՆՈՒԿ—Տո՛ւն:

ԱՔԻՍՈՂՈՄ—Քառասունի մոտ:

ՄԱՆՈՒԿ—Ե՛, ուրեմն ապրանքը ձեռքե փախցնելու չե:

ԱՔԻՍՈՂՈՄ—Այո, պետք է վոր հարսանիքը գալ շարժու ընեմ:

ՄԱՆՈՒԿ—Այո, գալ շարժու ընելու յե, վորովհետեւ ուշանալու ըլլաք նե՛ բամբասանքի տեղի կուտաք:

ԱՔԻՍՈՂՈՄ—Ձե, քիչ մը ուշացնելու յե:

ՄԱՆՈՒԿ—Յես պիտի ըսեյի, քիչ մը ուշացնելու յե, վորովհետեւ շուտ ըլլա նե՛ ամեն մարդ կասկածի կերթա:

ԱՔԻՍՈՂՈՄ—Բայց չե, շուտ ընեմ պիտի:

ՄԱՆՈՒԿ—Իմ միտքս ալ այդ է, շուտ ընելու յե, վորովհետեւ

ուչ ըլլանե՛հ՝ չար լեզուները ուղածներուն պես մեկնություն  
կուտան:

**ԱՒԻՍՈՂՈՄ**—Վաղը չե՛ մյուս որը պիտի յերթամ աղջիկը տես-  
նելու և հորը հետ խոսելու:

**ՄԱՆՈՒԿ**—Այո, մեկտեղ կերթանք և կը խոսինք. հա, Մելքոն  
աղան զիս տեսնալուն պիս...

Արիսողոմ աղան նամակ գրելով կը գրադվի:

**ԾԱՌԱ**—(Ծարս մը ձեռքին կմսեմ) Մեծապատիվ եֆենտին հատ-  
կապես բարեվ ըրած ե՛ ձեզի (Արիսողոմը առանց նամակին  
նայելու գրպանը կը խոթե):

**ՄԱՆՈՒԿ**— Մելքոն աղան զիս տեսնելուն պես թե՛վես բռնեց և  
ըսավ. յեթե տուն այսոր չաշխատիս, թաղականության ան-  
դամ չպիտի կրնաս ընտրվիլ...

**ԾԱՌԱ**—Մեծապատիվ եֆենտին բարեվ կընե յեղեր: (Նամակը  
կը հանձնե Արիսողոմ աղային, վորը նույն ձեռքով գրպանը կը  
խոթե):

**ՄԱՆՈՒԿ**—(Բարկացած) Մելքոն աղան զիս տեսնալուն պես թե-  
վես բռնեց և ըսավ, յեթե դուն այսոր...

**ԾԱՌԱ**—(Ներս կը մտնե):

**ՄԱՆՈՒԿ**—Մեծապատիվ եֆենտին բարեվ ըրած ե՛ դարձյալ:

**ԾԱՌԱ**—Վնչ, բեռնակիրներեն մեկը յեկած ե՛ և կրողչեքը կուզե:

**ՄԱՆՈՒԿ**—Վաղը թող դա: (Ծառան կերքա): (Արիսողոմ աղան  
դուրս կելնե): Նայինք ինչ կը գրե (Ծածուկ կերպով ծարս կը  
բանա յե՛վ կսկսի կարգալ): Սիրելի հայր, փառք աստծո, վողջ  
և առողջ հասա ի Պոլիս, շոգենավին մեջ շատ հանդիստ ե-  
յի, պատվականապես կերա, խմեցի և պառկեցա, շատ լավ  
լեղավ, վոր լեկա հոս, կըսեյի, կըսեյի չեյիլը ըսեր ինձի,  
հոս հարուստ քաղաք ե՛ և հարուստները կրնան ավելի հա-  
ընտանալ, Տրապիզոնն այլևս նեղ կուզար ինձի, բայց  
պետք ե՛ ըսել, վոր բավական ալ դրամ ծախսեցի, բայց հող  
մ՛ըններ փոխարենը մեկին տասը պիտի վաստկիմ, միայն  
թե կարողանամ. բազմակետ: Փառավոր տուն մը գնեցի  
Վոսփորի փոխ, վաղը պիտի նայիմ քանի մը վաճառատու-  
ներ գործը սկսելու համար, արդեն կրնաս նավ մը բեռ-  
նալ ապրանքներով և զրկել, այս կողմեն ալ յեվրոպական  
ապրանքներ պիտի զրկեմ քեզի:

Ներս կուգա Արիսողոմ աղան ծառային ձեռքով:

**ԱՒԻՍՈՂՈՄ**—Ավագակ, խարդախ, սրիկա քեզի քանի անգամ-



Ն կ ա ռ ի չ Հ. Բ Ա Դ Ա Լ Յ Ա Ն

«... Բայց յես մինչե՛վ վոր ձեռք գիմանկար պատկեր չհաճեմ,  
Արիսողոմ աղա, չեմ կրնար նանգիսս բլլալ»:

ներ հրամայեցի, վոր մշակներու հետ խիստ ըլլաս, ապ-  
բանքներու չորս աչքով նայիս, հրամաններս ժամանա-  
կին տեղ հասցնես, քանի վոր ըսածներս չըրիլ՝ յես ալ քեզի  
կը վոնտեմ:

**ԾԱՌԱ**—Չավակներու սիրույն համար ներե հանցանացս, այս-

չափ տարիներն ի վեր ձեր հացը կուտեմ, ներք հանցա-  
նացս:

**ԱՔԻՍՈՂՈՄ**— Դուքս կորսվի, անգամ մ'սլ չիմնամ...

**ՄԱՆՈՒԿ**— Ի՞նչ յեղով, Արիսողոմ աղա, բարկացուցի՞ն ձեզի:

**ԱՔԻՍՈՂՈՄ**— Ինչ կուղես վոր ըլլա, գործավորներես յերեք հոգի  
փախեր են և ինձի ալ վարկյան մը հանդիստ չեն թողուր,  
վոր...

**ՄԱՆՈՒԿ**— Իրավունք ունիս. ինձի ալ չթողուցին, վոր սալոյատ-  
մությունս ընեմ:

**ԱՔԻՍՈՂՈՄ**— Մանուկ աղա, դեռ շատ պիտի յերկարի քրտած  
պատմությունդ, կը տեսնամ վոր մինչև չվերջացնես չես  
կրնար հանգստանալ, և ինձի ալ հանդիստ թողուր, պատ-  
մե, այս անգամ ալ պատմե և վերջացուր, բայց կազաչեմ,  
կարճ կապի:

**ՄԱՆՈՒԿ**— Արդեն պիտի վերջանա, Արիսողոմ աղա, վճռեղ ե-  
յի հասեր, հա... Մեղքոն աղան դիս տեսնալուն պես...

**ԾԱՌԱ**— (Ներս մտնելով) Դերձակը յեկեր և և զգեստդ բռնվա կու-  
զե ընել, Արիսողոմ աղա, ներս թողնեմ:

**ԱՔԻՍՈՂՈՄ**— Ներս թող, այո, թող ներս գա, նոր զգեստներս  
շատ ուշացան:

**ԾԱՌԱ**— Ներս մտեք:

**ԴԵՐՉԱԿ**— (Մտնելով) Բարեւ, մեծապատիվ տեր, բռնվա կուզեմ  
ընել զգեստդ:

**ԱՔԻՍՈՂՈՄ**— Ըրե:

**ՄԱՆՈՒԿ**— (Բարկացած) Այս տարիքիս յեկած եմ և ասանկ բան  
գլուխս յեկած չեր, թող չեն տար, վոր յերկու խոսք ընեմ,  
հազիվ թե բերանս կը բանամ մեկը կուզա կըսկսի խոսիլ  
և իմ խոսք բերնիս մեջ կը մնա, մնաք բարով, Արիսողոմ  
աղա, վաղը կանցնիմ:

**ԱՔԻՍՈՂՈՄ**— Յերթաք բարով: Մանուկ աղա, այս նամակը նե-  
ղություն կրե հանձնելու յերեսի խանական խորհրդո փոխ-  
ատենապետին և պատասխանն իսկույն ինձի բեր: (Մա-  
նուկ կը մեկնի նամակով): (Դերձակին) Ե', նայինք աղվոր  
բան մը պիտի ըլլա թե վոչ, ապրանքը շատ ընտիր ե:

**ԴԵՐՉԱԿ**— Մքանչիլի ապրանք մ'ե, նմանը չկա:

**ԱՔԻՍՈՂՈՄ**— Ուր եր թե քանի մը հազար հակ ունենայի այս  
ապրանքեն:

**ԴԵՐՉԱԿ**— Ապրանք մը վորու գույնը չըլջեր, ապրանք մը, վոր  
հազար անգամ իսկ յեթե լվացվի չփոխեր յուր գաղափարը:



Բժիշկ Ա. Ա. Ա. ՅԱՆ

«... Վոն, ոտարախրուրյուն... ոտարախրուրյուն, յերբ պիտի յերթաս  
մեք ֆովեն...»

**ԱՔԻՍՈՂՈՄ**— Սկզբունքի տեր ապրանք մ'ե:

**ԴԵՐՉԱԿ**— Յե՛վ հաստատ սկզբունքի տեր, վորովհետե՛վ բնավ չը-  
պատուիր, հարյուր տարի կրնա գործածվիլ:

**ԱՔԻՍՈՂՈՄ**— Դե, սկսե՛նայինք: (Կսիսի հանվիլ յե՛վ դեռ չը կար-  
ված հագուստը հագնիլ) Աղեկ վերցուր չափս ու ձե՛վը նեղ  
չեմ սիրեր, յես շատ կարե՛վորություն կուտամ զգեստին:

**ԴԵՐՉԱԿ**— Իրավունք ունիք, Արիսողոմ աղա, շատ լավ եք ըմ-

բռնե՛ր հագուստին նշանակութիւնը, հիմա կարելի է գիտուն ըլլալ առանց հագուստի, նամանավազ շքեղ հագուստի:

**Ա.ԲԻՍՈՂՈՄ**— Հա, հա, հա, հա:

**ԴԵՐՉԱԿ**— Այո, այո, հագուստն մեծ դեր կը խաղա ուղեղին մեջ:

**Ա.ԲԻՍՈՂՈՄ**— Յենթադրենք թե այսոր կը փափագիմ յես նավապետ ըլլալ, կընամ փափագիս հասնիլ առանց նախապես ուսում առնելու նավային վարժարանի մը մեջ:

**ԴԵՐՉԱԿ**— Այո, շատ դյուրութեամբ:

**Ա.ԲԻՍՈՂՈՄ**— Ինչպես:

**ԴԵՐՉԱԿ**— Նավապետի գլխարկ մը կը գնեք, գլուխնիդ կանցունեք, կը լմննա կերթա:

**Ա.ԲԻՍՈՂՈՄ**— Ի՞նչ կըսեք, գիտութիւնը գլխին մեջ ե և վոչ թե գլխարկին:

**ԴԵՐՉԱԿ**— Գլխարկին մեջ ե, գլխարկին, Արիստոզոմ աղա, վոր գիտութիւնն ուսուցած ե, յես ալ ազ գիտութեան ստեղծողն եմ, իմ վարպետութեան շնորհիւ վորքան մարդիկ առաջ գացին, դուք ալ, Արիստոզոմ աղա, այս հագուստը հագնելն յետքը կը տեսնեք թե վորչափ պիտի առաջ յերթաք, բայց ավանդ, մենք դերձակներս բազմ չունինք, վասնզի գնահատողներ չունինք: Ախ, ախ, խնդրո մը վրա քեզի պիտի աղաչեմ, Արիստոզոմ աղա:

**Ա.ԲԻՍՈՂՈՄ**— Յեթե դրամ պիտի աղաչես՝ վորորմութիւն ընելու սկզբունքով հակառակ եմ:

**ԴԵՐՉԱԿ**— Վոչ, մեծապատիւ տեր, վոչ, խորհուրդ մը պիտի հարցունեմ քեզի:

**Ա.ԲԻՍՈՂՈՄ**— Հրամմեցեք, ըսեք:

**ԴԵՐՉԱԿ**— Յերեսուն և հինգ վոսկովո պարտք ունիմ և դայն վճարելու համար խելքի կը կարոտիմ:

**Ա.ԲԻՍՈՂՈՄ**— Ի՞նչպես գոյացալ այդ պարտքը:

**ԴԵՐՉԱԿ**— Իրավ վոր յես ալ չգիտեմ, պարտքն առանց ինձի իմաց տալու գոյացեր ե:

**Ա.ԲԻՍՈՂՈՄ**— Ավելի աղեկ, պարտք մը վորչափ մեծնա այնքան կազատի վճարելու մտմտութեն: Կը մեծնա, կը մեծնա և վերջապես որ մ'ալ կը վախճանի... Պարտքերն ունմա՞ն չեն:

**ԾԱՌԱՍ**— Ներս մտեք (յերեք տիկիներն ներս կը մտնեն, Արիստոզոմ աղան վեր կը ցատկէ, տիկիներն անոր տեսնեն օրորված դուրս կելնեն):



ԳԵՐՃԱԿ Գ. ՂԱԶԱՐՅԱՆ  
«... Ախ. յեռեսուն հինգ... յեռեսուն հինգ...»

**Ա.ԲԻՍՈՂՈՄ**— (Ծառային) Այ ինչ իշութիւնն ե, ինչո՞ւ նախապես իմաց չավիր ինձի:

**ԾԱՌԱՍ**— Դուք պատվիրեցիք, վոր յեթե ձեզի խնդրողները կանայք ըլլան առանց իմացնելու ներս թողնեմ:

**Ա.ԲԻՍՈՂՈՄ**— Հոս տեղվանքը շակուտե՛ (Կսկսի հագվիլ) Տեսնենք ինչ կնիկներ են սըվոնք, թերևս աղջիկ ունին կարգելու և

իմ Պորիս գալս իմանալով հետս խոսելու յեկած են, բայց յես մինչև վոր չստուգեմ անոր ինչ կարողութեան տեր ըլլալը, մինչև վոր աղջկանը չքննեմ, խոսք չեմ տար: Շտապելու պատճառ չունիմ: (Մառալին) Ներս հրամցուր:

Տիկիները ներս կը մտնեն:

1-ԿԻՆ—Բարե՛վ, Արիստղոմ աղա:

ԱՌՍՈՂՈՄ—Աստճո բարին, տիկին:

2-ԿԻՆ—Բարե՛վ, Արիստղոմ եֆենտի:

ԱՌՍՈՂՈՄ—Աստճո բարին, տիկին:

3-ԿԻՆ—Բարե՛վ, մուսյո Արիստղոմ:

ԱՌՍՈՂՈՄ—Աստճո բարին, տիկին: (Տիկին բառին վրա կիներ մեկ կանգուն վեր կցատկե):

1-ԿԻՆ—Անիկա որբորդ է, Արիստղոմ աղա:

ԱՌՍՈՂՈՄ—Ի՞նչ կըսեք, տիկինը որբորդ է յեղեր, յես չեյի գիտեր, նստեցեք, կաղաչեմ:

ԴԵՐՁԱԿ—Աստճո ալ ժամանակ գտան ներս գալու, է, մնաք բարով Արիստղոմ աղա, յերկու որեն պատրաստ կըլլա:

ԱՌՍՈՂՈՄ—Կեցիք, չուշանա, աղվոր ըլլա, հիսուն վոսկի յեմ վճարեր զգեստիս կտորին, հոս յեկուր, առ քեզ յերկու վոսկի նվեր...

2-ԿԻՆ—Ի՞նչ հարստութեան:

3-ԿԻՆ—Ի՞նչ վեհանձնութեան:

ԴԵՐՁԱԿ—Շնորհակալ եմ, շնորհակալ եմ, քսակդ միշտ լիքն ըլլա, մնաք բարով, Արիստղոմ աղա:

2-ԿԻՆ—Ե, ինչպէս եք, Արիստղոմ եֆենտի, աղէկ եք:

ԱՌՍՈՂՈՄ—Փառք աստճո, ձեզի տեսանք ավելի աղեկ յեղանք:

1-ԿԻՆ—Ինչպէս ժամանակ կանցունեք, գիշերները:

ԱՌՍՈՂՈՄ—Շիտակը մինակ կանցունեմ շուտ կը պառկիմ շատ կը հոգնիմ:

Ներս կը մտնեն ծառան սուրհ հրամցնելով:

2-ԿԻՆ—Մինակ եք, հարկավ պիտի հոգնիք:

ԱՌՍՈՂՈՄ—Այո, մինակ եմ դեռ, բայց քանի մը առաջարկութեաններ արդեն ունիմ, վորը վոր գործիս յեկավ անոր հետն ալ գործը կը լմնցնեմ, շիտակը ձանձրացա մինակութեանս:

1-ԿԻՆ—Գիտե՞ք, Արիստղոմ եֆենտի, մեր հոս գալուն պատճառը:

ԱՌՍՈՂՈՄ—Կը հասկնամ:



Շ ու լ օ ա ն դ եր տ ա ն ու ճ ի 2. Բ Ա Բ Ա Չ Ա Ն Յ Ա Ն  
«Այբեր սե՞վ ըլլան, քե կապույտ...»

2-ԿԻՆ—Մարդասիրական գործ մ'է, վոր հոս հրեց զմեզ:

3-ԿԻՆ—Յե՛վ միանգամայն ազգասիրական:

1-ԿԻՆ—Կը հուսանք, վոր Արիստղոմ աղան չպիտի մերժե մեր առաջարկութեանը:

ԱՌՍՈՂՈՄ—Ինչո՞ւ մերժեմ, բայց մինչև վոր չիմանամ վորու հետ գործ ունիմ, չը քննեմ, զրամագլխին հետ ծանոթանամ, խոսք չեմ կրնար տալ վոր...»

1-ԿԻՆ—Կրնաք ծանոթանալ, Արիստղոմ աղա, բայց հիմակու հիմա քանի՞ վոսկի գրենք:

**ԱՔԻՍՈՂՈՄ**—Այդ վորուն կողմեն վոր առաջարկություն կընեք  
ինձի, անիկա կարողություն ունի:

**3-ԿԻՆ**—Յերեք հազար վոսկու դրամագլուխունի:

**ԱՔԻՍՈՂՈՄ**—Յերեք հազար:

**3-ԿԻՆ**—Այո:

**ԱՔԻՍՈՂՈՄ**—Ըհրմ... քանի տարեկան ե...

**2-ԿԻՆ**—Յերկու տարվան հաղիվ ըլլա:

**ԱՔԻՍՈՂՈՄ**—Յերկու տարեկան, դիս կը ծաղրեք կոր...

**1-ԿԻՆ**—Ծաղրելու ինչ կա:

**ԱՔԻՍՈՂՈՄ**—Այդ չափ պիտի սպասեմ, վոր մեծնա կ'ընի ա-  
մուսնանամ հետը, ծաղր չեմ մի:

**3-ԿԻՆ**—Վորո՞ն հետ պիտի ամուսնանաք, մեր ընկերության հետ  
պիտի ամուսնանաք յեղեր...

**ԱՔԻՍՈՂՈՄ**—Ձեր ընկերությանը:

**1-ԿԻՆ**—Հապա դուք վորո՞ն համար կը խոսեցիք:

**ԱՔԻՍՈՂՈՄ**—Հարսնացուի համար չի՞ք խոսեր, յես այդպես  
կարծեցի, վորովհետև խնամախոսներու կսպասեմ:

**3-ԿԻՆ**—Թողություն կընեք, մենք բարեգործական ընկերության  
մը կողմն դրամ հավաքելու յերած ենք: Վաղը գիշեր պա-  
րահանդես մը պիտի արվի հողուտ դավառի մեր հայ սով-  
յալներուն և ձեզի պարահանդեսի տոմսակ ենք բերեր:

**1-ԿԻՆ**—Այո, տվեք տասը հատ Արխողոմ աղային:

**ԱՔԻՍՈՂՈՄ**—Տասը հատ, կը ծաղրեք կոր զիս...

**3-ԿԻՆ**—Շատ աղեկ, առեք հինգ տոմսակ և տվեք սա հինգ վոս-  
կին:

Արխողոմը հինգ վոսկին կրվառե յով կառնե՞ տոմսակը:

**1-ԿԻՆ**—Շնորհակալ ենք, մնաք բարով, Արխողոմ աղա:


**ԱՔԻՍՈՂՈՄ**—Յերթաք բարով, տիկին:

**2-ԿԻՆ**—Մնաք բարով, Արխողոմ եֆենտի:

**ԱՔԻՍՈՂՈՄ**—Յերթաք բարով, տիկին:

**3-ԿԻՆ**—Մնաք բարով, մուսուր Արխողոմ:

**ԱՔԻՍՈՂՈՄ**—Յերթաք բարով, տիկին: (Տիկին խոսիմ վրա կիմը  
մեկ կանգուն վեր կը ցատկե): Եղբայրներ ըրի, ավանակու-  
թյուն ըրի, տալու չեյի... յերեքը մեկեն խաբեցին զիս...  
յերթամ յետ ուզեմ սա հինգ վոսկին, կուտամ, ե... կը  
վայելի վոր ուզեմ... յետ չեն տար... (Կը գանգաճառե,  
նետ կը մտնեն ծառաներ):



**VI պատկեր**

Բարեգործական կանանց մուսքը Արխողոմ աղայի մտ

**1-ՇԱՌԱ**—Ի՞նչ կը հրամայեք, տեր:

**ԱՔԻՍՈՂՈՄ**—Վոչինչ ալ չեմ հրամայեր, յետ գացեք, բայց վոչ,  
հոս յեկեք: (1-ին ծառային) Վազե դերձակիս մոտ պատվի-  
րե իրեն, վոր նստի գիշերս աշխատի և նոր զգեստս վաղը  
հասցնե, վասնզի պարահանդես պիտի յերթամ, կըսես վոր  
այն յերկու վոսկին նվեր չեք, այլ կանխավճար եր... կան-  
խավճար, շուտ ըրե, ան նկարիչին ալ գտիք և պատվիրե,  
վոր անմիջապես գա պատկերս քաշելու: (2-րդ ծառային)  
Քեզի ալ կը հրամայեմ, վոր դուռները փակես և ամեն  
մարդու ներս չը թողնես, հոյզե: (Ծառան դուրս կերթա)  
ալ չը խորհինք տոմսակներուն համար... չը խորհիլ ալ կըլլեմ  
մի յա... Թող դաս ըլլա, մեյմնալ տասնի բաներու ստակ  
չեմ տար, կը լմննա կերթա, նամակ մ'ալ պիտի գրեմ տու-  
նը, վոր մշակներուս վրա չեղած ծախքերը պատիկցնեն քա-  
նի մը ամիսներ և այս կերպ ծախսածս տեղը կուզա կը  
լմննա կերթա... Թերեվս սա պարահանդեսին մեջ շատերը

**ԱՔԻՍՈՂՈՄ**—Այդ զանգակը ինձի տուր, խնդրեմ:

**ՓԱՍՏԱՔԱՆ**—Հրամմեցեք, Արխողոմ աղա:

**ԱՔԻՍՈՂՈՄ**—(Կը զանգահարե, ներս կուգան ծառաները) Դուրս վերջն-տեք սըվոր:

**ՄԱՆՈՒԿ**—(Ներս վազելով) Արխողոմ աղա, աչքերնիդ լուչս:

**ԱՔԻՍՈՂՈՄ**—Սես... Թողեք մեզ մի նակ, հետո ձեզի հետ գործը կը լմնցնենք, հայդե: (Դուրս կերթան): Դե, ըսե նայիմ:

**ՄԱՆՈՒԿ**—Ըսելու հարկ չկա, կարգա, կարգա, Արխողոմ աղա և պատրաստվե: (Նամակ մը կը հանձնե):

**ԱՔԻՍՈՂՈՄ**—(Կտարաջով) Վսեմապատիվ Արխողոմ եֆենտի, Մանուկ աղայի միջոցով ստացա ձեր նամակը, վորով կը հայտնեք ազգասիրական փափագ մը, կուզեք անդամ ընտրվիլ ազգիս յերեսփոխանական ժողովին, ի պատասխան ձեզ կը հայտնենք, վոր ժողովս միաբերան կը վողջունե ձեզ նման մեծատուն և յերեկվիլի վաճառականի մը, վորն անշուշտ պարտավոր է յերեսփոխան ըլլալու և տառապյալ ազգիս բախտը տնորինելու, արդ, այսոր յերեկոյան բարեհաճեցեք ներկա գտնվիլ նիստին... և աստժո ոգնությամբ ձեր արդար փափագը հաջողությամբ կը պսակենք, իմ և ըտլորի կողմեն յերախտագիտությամբ լի շնորհակալություններս կը հայտնեմ ուղարկած և խոստացած նվերներուդ, վորոնք ձեր անկաշառ ազգասիրությունը կապացուցեն, կը բարեվե տիկինս և 17 ամյա դուստրս:

**ՄԱՆՈՒԿ**—Յերեսփոխանություն և 17 ամյա դուստր, ասոր ինչ կըսես, Արխողոմ աղա:

**ԱՔԻՍՈՂՈՄ**—Սը ըսելիք չմնաց, Մանուկ աղա, հիմա հասկցա, թե ինչու տվի այն հիսուն վոսկին հա, հա, հա, հա: (Ներս կը մտնե սպասավորներեն մեկը): Գնա, շուտ գտիր վերակացույին, պատվիրե իրեն, վոր Տրապիզոնեն ստացված ապրանքներն ընդունե, վաճառքի հանված խանութներուն բեհերը տա, ապրանքներով մեկնող նավը բեռնե, շուտ ըրե... ըսե Արխողոմ աղան մեծ տեղ մը պիտի յերթա և այսոր ժամանակ չունի, թող ինքն ընե, հայդե, կեցիր, անիկա մինակ չի կրնար, փաստաբան, պարոն փաստաբան, ծառայիս հետը գնա, ինձի մոտ հսկիչ կըլլաս, ապրանքներս կը պաշտպանես, հայդե: Դերենիկ, պարոն Դերենիկ, հոս լեկուր, ինչ ըրիր, վերջացուցիր չե նե...

**ԴԵՐՆԵՆԻԿ**—Պատրաստ ե: (Յույց տալով պատկերը):



**VII պատկեր**  
Ֆ ի ն ա լ

**ԱՔԻՍՈՂՈՄ**—Ե, ինչպէս և, կը նմանի, Մանուկ աղա:


**ՄԱՆՈՒԿ**—Արխողոմ աղա, յեթե տակը ձեր անունն ալ գրվի այն ատեն շատ կը նմանի:

**ԱՔԻՍՈՂՈՄ**—Դե, մենք Մանուկ աղայի հետ գործ ունինք, պիտի յերթանք, դուն վաճառատուներուս ցուցանակը պատրաստե «Արխողոմ և ընկերություն» տառերը յերկար ու հաստ ըլլան:

ԴԵՐՆԵՆԻԿ—Շատ աղեկ եֆենտիս:

ԱՐԻՍՈՂՈՄ—Պատկերս կը բերեք մեր չեռեկից, բայց նայե աղեկ վարվիս հետը, վասնզի յերեսփոխանական ժողովաբան լինի մեջ պիտի կախվի. դե, յերթանք, Մանուկ աղա: (Կերտն):

Վ. Ա. Ր. Ա. Գ. ՈՒՅՐ



VIII պատկեր

Մանուկ աղայի գինավարժարյունը

ԳՈՐԾՈՂ ՈՒԹՅՈՒՆ ԶՈՐՐՈՐԿ

ՊՄ. ՏԿԵՐՅՈՒՆ ԵՐՐԿ

Մանուկ աղայի տունը

Գիշեր է, Շողակաբ կը քնանա, կը լսվի դռան զարկը:

ՇՈՂԱԿԱԹ—(Կտրքննա)... Աստուծո՛ւմե գտնո՛սս, մարդ, վար ո՞ր մը ժամանակին տունն չես գար: Գետինն անցնի այդ ազգային խնդիրն ալ, ալ, ալ հարև ինկա: (Դռան զարկերը կը սասկանան) Դուռը պիտի կտորե, յեկան, աշխարհը գլխուդ պիտի հավաքես, մահվան տողերու գաս, մահդ: (Դուռը կը բանա:

ՄԱՆՈՒԿ—(Կը մտնե բերքը ձեռքին պոռալով) Չես ըսեր կնիկ, ավետիս մը պիտի տամ քեզի: Մտիկ ըրե (կը կտրդա բերքը) «Հաստավ փրկության ժամը, սրբազան պատրիարքն ավետեց յերեսփոխանական ժողովույն, վոր մեծ ազգություն»

ներու ավագ ժողովը վերստին ձեռք առավ Հայաստանի անկախութեան հարցը և մեծ յեռանդով դրական լուծումն պիտի տրվի մեր խնդրույն:

**ՇՈՂԱԿԱԹ**—Փառք ասածու, ըսել է թե ասկե լետքը ժամանակին պիտի տունք գաս և սրճարանները չըպիտի քաշքշվիս, իրավ վոր ուրախ լուր եր ինձի համար:

**ՄԱՆՈՒԿ**—Շարունակութունը մտիկ ըրե: Ո՛ն, ուրեմն զեպի գործ, թող մեր ազգայինները պատրաստվին Հայաստանի կուսակալ ըլլալու: Այ այս գիշեր ուրախութենես չպիտի քնանամ, ընելիքներուս վրա պիտի խորհիմ, Հայաստան պիտի յերթամ—կնիկ, շուտ ըրե, սա ողերգ ինձի տուր:

**ՇՈՂԱԿԱԹ**—Ողերս ի՞նչ պիտի ընես:

**ՄԱՆՈՒԿ**—Պիտի ծախեմ և զքեզ հետս առնելով՝ Հայաստան պիտի յերթամ:

**ՇՈՂԱԿԱԹ**—Խենթեցար, յես սըկե հուշա չեմ յերթար: Թաղին սնտուկը թողած ողերս կալար:

**ՄԱՆՈՒԿ**—Ըսել է թե ողերգ Հայաստանես ավելի կը սիրես:

**ՇՈՂԱԿԱԹ**—Այ ինչ խոսք է, Հայաստանը կընամ ահանջներես կախել:

**ՄԱՆՈՒԿ**—Կուսակալ ըլլայի ահանջներդ կը կտրեյի:

**ՇՈՂԱԿԱԹ**—Քուկին կուսակալութունդ եր պակաս:

**ՄԱՆՈՒԿ**—Կեցիք, պիտի ըլլամ, կուսակալ պիտի ըլլամ:

**ՇՈՂԱԿԱԹ**—Ուշ գիշեր է, պառկե քնե:


**ՄԱՆՈՒԿ**—Այ հերիք է, ինչքան քնացանք, ալ բախկան է, հասավ փրկութեան ժամը, բարձրագույն դուռը վերստին ձեռք առավ Հայաստանի անկախութեան հարցը և մեծ յեռանդով դրական լուծումն պիտի տրվի մեր խնդրույն, ո՛ն, ուրեմն, թող մեր ազգայինները պատրաստվին Հայաստանի կուսակալ ըլլալու: Այս անգամ հուշս աստված ազգս իր վիճակը պիտի անորինե:

Կը վագե, առց կը բան սնտուկը յեվ ասկե կը հոգն հիմ հրացան մը յեվ Վաղան Մամիկոնյանի պատկերը, յեվ կրակի վարժարաններ ընել:

Մի ձախ, մի անջ... մի ձախ, մի անջ... մեկ, յերկու, յերեք. մեկ յերկու յերեք:

**ՇՈՂԱԿԱԹ**—Ի՞նչ կընես մարդ, ուրախութենես սեվսեվեմիս յերար:

**ՄԱՆՈՒԿ**—Քալ առջ մեկ, յետ յերկու...



IX պատկեր  
Յեկ յեկեցիք

**ՇՈՂԱԿԱԹ**—Խելագարված է:

**ՄԱՆՈՒԿ**—Կուսակալ պիտի ըլլամ: Հապոն առնջ:

**ՇՈՂԱԿԱԹ**—Մանուկ աղա, ինչ յեղավ քեզի: Հիմա խելքս կը թոցնեմ:

**ՄԱՆՈՒԿ**—Պատրաստ, մեկ, յերկու...

**ՇՈՂԱԿԱԹ**—Իրավ վոր խենթեցավ, ասոր մեկ ձար, Մանուկ աղա...

**ՄԱՆՈՒԿ**—Ի՞նչ կուզես, կնիկ, հապոն առնջ, մի ձախ, մի անջ:

**ՇՈՂԱԿԱԹ**—Կապելու և փրկիչ տանելու յե, խեղճ մարդ:

**ՄԱՆՈՒԿ**—Պատրաստ—թշնամույդ նշան, մեկ, յերկու:

**ՇՈՂԱԿԱԹ**—Ման... (հրացանի անսպասելի պայթյուն,) Ա՛, հայկական հարց, տունս կործանեցիք...

Վ. Ա. Ր. Ա. Գ. ՈՒԹՐ

Պ. Ա. Տ. Կ. Ե. Ր. ՈՒԹ. Ե. Ր. ՈՐ. Գ.

ՄԱՂԱԿ ՓՈՂՈՑ

**ՄԱՆՈՒԿ**—(Պատահանեմ) Որիորդ Ազալնի, որիորդ Ազալնի, այդ մեր կերթաք, իմացանք գիշերվան պայթյունը, մի սպանվեցավ, կոտորած պիտի ըլլա, յերեք պիտի ըլլա:

ԱՂԱՎՆԻ—Կոտարածին լուրը տակավին ճշտված չէ և վոչ վոք  
ալ սպանված չէ:

ՍԱՆԴՈՒԽՏ—Հապա հրացանի պայթյունն ինչ էր:

ԱՂԱՎՆԻ—Թաղական Մանուկ աղայի պայթյունն է յեզեր, հայ-  
կական խնդրույի վրայոք առնված հաջող լուրերուն վրա  
Մանուկ աղան զիշերը հրացան է պարպեր թյուրք կառա-  
վարության վրա:

ՍԱՆԴՈՒԽՏ—Ի՞նչ հերոսութիւն:

ԱՂԱՎՆԻ—Հապա:

ՍԱՆԴՈՒԽՏ—Ե, յթաքը:

ԱՂԱՎՆԻ—Հրացանի ձայնին վրա վոստիկանները վրա յեն հա-  
սեր և տեղն ու տեղը ձերբակալեր են:

ՍԱՆԴՈՒԽՏ—Մանուկ աղային:

ԱՂԱՎՆԻ—Մանուկ աղային և Սուրբ Վարդան Մամիկոնյանին:

ՍԱՆԴՈՒԽՏ—Քա Սուրբ Վարդանն ուրկէ յեն հաներ:

ԱՂԱՎՆԻ—Պատին վրայեն են հաներ և միասին ձերբակալեր տա-  
րեր են... բայց կաղաչեմ, ուրիշին չըսեք... (Սղափմին ա-  
րագ գուրն կերքա):

ՍԱՆԴՈՒԽՏ—Ատանկ բանը ուրիշին կըսվի: (Կերելա սիկին Շու-  
տանք) Տիկին Շուշան... տիկին Շուշան... այդ հար կեր-  
թաք...


ՇՈՒՇԱՆ—Ժամանակ չունիմ, հարսանիքեն կուշանամ:

ՍԱՆԴՈՒԽՏ—Տիկին Շուշան, պսակվողը հվ.ե... անծանոթ է:

ՇՈՒՇԱՆ—Ինչպէս անծանոթ բլլա «Մասիս» —ը չեք կարդացեր:

Կը հանն «Մասիս» լրագիրը յե՛վ կը կարգա

Բերկրութեամբ սրտի իմացանք, վոր ազգային յերեւոյն-  
խան, բարերար, յերեմելի վաճառական, աղնվափալ Ա-  
բիսողոմ եֆենտին այսոր կամուսնանա վսեմափալ և յերե-  
վելի վաճառական Հակոբ եֆենտի նազելաշուք աղջկան  
հետ, այս միութիւնը մեծ բերկրութիւն պիտի պատճառե  
վողջամիտ ազգայիններուն, վասնզի այս միութենեն պի-  
տի ծնանին այնպիսի զավակներ, վոր «Մասիս» բաժա-  
նորդ պիտի զըվին, մեծամեծ ծառայութիւններ պիտի  
մատուցեն ազգին: Հարսանյաց հանդեսը պիտի կատարվի  
այսոր Որթա գյուղի Ոհան վոսկեբերան յեկեղեցու մեջ:



Կ Ե Ր Ա Ս Ա Ն Ս Ո Ւ Բ Ե Ն Յ Ա Ն

«... Ինչու կը մուտա... Ինչու կը մուտա ...»

Մնաք բարով: (Շուտանք կերքա):

ՍԱՆԴՈՒԽՏ—Ելիպս հանըմ, Ելպիս հանըմ, Ինչպէս եք, աղէկ եք,  
Մանուկ աղան և Վարդան Մամիկոնյանը պիտի կարգվին  
այսոր, ինչ ըսի, յերեւոյնխան Աբիսողոմ աղան պիտի կարգվի

այսոր Սուրբ Ոհան Վոսկեբերան յեկեղեցո մեջ: Վարդան  
 գորավարը և թաղական Մանուկ աղան բանտարկվելը են  
 գիշերը, ապստամբութեան համար:  
 ԵԼՊԻՄ—Սրբունի տուտու... Սրբունի տուտու... Մանուկ աղան  
 ազգային հերոս և յեղեր... Աբխազոմ աղան կը կարգվի յե-  
 դեր...

Վ. Ա. Ր. Ա. Գ. ՈՒ Թ. Ր

**Պ Ա Տ Կ Ե Ր Ի Ն Ն Ե Ր Ո Ր Դ**

Ոնան վոսկեբերան յեկեղեցին

Յեկեղեցո նսիւսը, մեծ խաչագարդ դուռ մը յիվ իջնող սանդուխներ,  
 վորոնց աստիճաններու վրա կանգնած յեվ նսած են մուրացիկներ,  
 քիչ յետք Աբխազոմ աղան յիվ իր կիներ հանդիսավար դուռս կեկնեն  
 յեկեղեցիեն, անոնց յեկեկն կուգան բոլոր գործող անձերը: Դողդո-  
 ջուն մարդ մը կը մտնեն յիվ նամակ մը կը հանձնեն Աբխազոմ  
 աղային:

- Ա.Բ.Ի.Ս.Ո.Ղ.ՈՍ—Ի՞նչ կուզես, մարդ:
- Դ.Ե.Ր.Ա.Ս.Ա.Ն—Մեջը գրված է:
- Ա.Բ.Ի.Ս.Ո.Ղ.ՈՍ—Դուրսը մեջը քեզի ըլլա, ի՞նչ կուզես, ըսէ:
- Դ.Ե.Ր.Ա.Ս.Ա.Ն—Վաղը իբրիկուն ներկայացուած մը պիտի տամ իմ հաշ-  
 վույս համար և ձեր ազնվութեան ոթթյակի մը տոմսակ  
 բերի:
- Ա.Բ.Ի.Ս.Ո.Ղ.ՈՍ—Յես չեմ ուզեր:
- Դ.Ե.Ր.Ա.Ս.Ա.Ն—Յեռեսուն տարիէ ի վեր թատերական բեմի վրա  
 կը քալիմ:
- Ա.Բ.Ի.Ս.Ո.Ղ.ՈՍ—Թող նստեցիր:
- Դ.Ե.Ր.Ա.Ս.Ա.Ն—Յեվ ազգիս ծառայութեան կընեմ:
- Ա.Բ.Ի.Ս.Ո.Ղ.ՈՍ—Աղայութեան բնեցիր թող, ինչո՞ւս պետք իմին:
- Դ.Ե.Ր.Ա.Ս.Ա.Ն—Յեռեսուն տարիէ ի վեր բարոյական դպրոցին մեջ  
 ազգին վարժապետութեան կընեմ:
- Ա.Բ.Ի.Ս.Ո.Ղ.ՈՍ—Ի՞նչ փուլթ ինձի:
- Բ.Ո.Ղ.Ո.Ր.Ը—Ի՞նչ փուլթ անոր:
- Դ.Ե.Ր.Ա.Ս.Ա.Ն—Յեվ իրավունք ունիմ, կարծեմ ինձի համար արվե-  
 լիք ներկայացման ձեղի պես ազնիվ մեկն ալ հրավիրել:
- Ա.Բ.Ի.Ս.Ո.Ղ.ՈՍ—Յես պետք չունիմ:
- Բ.Ո.Ղ.Ո.Ր.Ը—Ան պետք չունի:
- Դ.Ե.Ր.Ա.Ս.Ա.Ն—Կազաչեմ, մի մերժեք, յեթե մերժելու ըլլաք, զիս  
 փողոցներու մեջ խայտառակ ընելու պատճառ պիտի տաք:



X պատկեր  
 Ֆ ի ն ա լ

- Ա.Բ.Ի.Ս.Ո.Ղ.ՈՍ—Բեղի մտիկ ընելու ժամանակ չունիմ:
- Բ.Ո.Ղ.Ո.Ր.Ը—Ժամանակ չունի:
- Դ.Ե.Ր.Ա.Ս.Ա.Ն—Գոնե վոսկի մը փոխ տվեք ինձի, տեր, չեթե ասկից  
 ձեռնունացն յես դառնամ, իմ մահս պիտի տեսնիմ:
- Ա.Բ.Ի.Ս.Ո.Ղ.ՈՍ—Հա, հա, հա, ալ հերիք է ինչքան վողորմեցանք,  
 ով կարծեցիք դուք զիս, վոսկե տողարակով ապուշի տեղ  
 դիրք զիս, վոչ, չես ընելիքս գիտեմ: Ասկից յետքը յես մի-  
 աջն ազգիս պիտի ծառայես: Մակայն յես բնավորութեան  
 մը ունիմ, վոր ամեն ինչ շխտակը կուզեմ, յես կուզեմ վոր  
 ամեն հաջ լալ ապրի: Դերասան, առ սա վոսկին և գնա  
 ծառայելու հայ բեմին, և մի մոռնար ինձի: (Վոսկի մը կու  
 տա դերասանին): Այս մուրացիկաններուն ալ վողորմելու  
 չե, առեք, դուք ալ, առեք և աղոթեցեք ինձի համար, բայց  
 ինչո՞ւ կը մուրաք, ինչո՞ւ կը մուրաք:

ՔՈՂՈՐԸ—Ինչձե կը մուրաք: (Նուրս կերբան հանդիսավար քայլերով):  
ԳԵՐԱՍԱՆ—(Մեծակ) Ինչձե կը մուրաք, ինչձե կը մուրաք... (ըն-  
դունելով մուրացիանի դիրք): Ինչձե կը մուրաս...

Վ. Ա. Ր. Ա. Գ. Ո. Ի. Յ. Ր.

Վ. Ե. Ր. Զ.



« Ազգային գրադարան



NL0362202

50177